№ 207 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 207

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ՍՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և ազգ օրերից)

Բաժանորդագրութիւն ընդունվում է ամեն լեզուով

Բաժանորդագրութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Ցպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԹՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խընդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԿՈՂ ՔԱՂԱՔԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ

Վաղը, սեպտեմբերի 23-ին, առաւօտեան ժամը 11-ին **ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐԳԱՐՈՒԹԻՒՆ ՄԵԾ ԻՇԽԱՆ ՆԻԿՈԼԱՅ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ** ժամանում է մեր քաղաքը։

Հաւատացած լինելով նրանում, որ քաղաքի ազգաբնակութիւնը բուռն ուրախութեամբ կողջունի Թագաւորի Փոխարքային, ես հրաւիրում եմ քաղաքի ազգաբնակութիւն զարդարել իրանց տները դրօշակներով, գորգերով և ծաղիկներով, առանձնապէս **ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐԳԱՐՈՒԹԵԱՆ** անցնելու ճանապարհի վրա—կայարանից Վէրայի կամուրջի վրայով, Սիօնի և Վանքի տաճարները մէջեղները։

Թիֆլիսի քաղաքագլուխ՝ Ալ. ԽԱՏԻՍԵԱՆ

Կովկ. Հ. Բար. Ընկ. նպաստով պահվող դպրոցների համար հարկաւոր են

ՈՒՍՈՒՑԻՉ-ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐ

1) Կիսլովոդսկի համար . . . . . 480 ր. ռոճ, սեռ., վառ., ծառայ։
2) Օրդուբաթի . . . . . 400 ր.
3) Դուշէթի . . . . . 400 ր.
4) Զիրօւխլիի . . . . . 400 ր. ռուսաց լեզուից
5) Քարվանսարայի . . . . . 400 ր.
6) Պողոսքիլիսայի . . . . . 400 ր.
7) Քախուբէլի . . . . . 360 ր.
8) Սև-Քարի . . . . . 600 ր. մի վարժ. և մի ուսուց.
9) Ակչաջուրի . . . . . 300 ր.

Ցանկացողները շուտով պէտք է դիմեն Կ. Հ. Բ. Ընկ. գրասենեակ՝ Թիֆլիս Աբաստ. Աբգարեան հրապարակ № 7։
առ. 667. 2—1

ՏԱՃԿԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտնում է հայ հասարակութեան, որ Կրծանիսում, Միրանաւոր վանքի գաւթում ապաստանած 150—170 օրբերի խնամակալութիւնը սեպտ. 15 ից վերցրել է իր վրա՝ հոգալով նոցա առօրեայ ծախքերն և մտածում է նրանց դաստիարակութեան մասին։

Միութիւնը յայտնելով այս մասին, կոչ է անում բոլոր նրանց, օրոնց սրտին մօտ է աւերեալ հայրենիքից փախած դժբաղդ օրբերի կեանքի գոյութեան ապահովութիւնը, թող բարեհաճեն իրանց լսման, ինչ չափով էլ լինի նա, նուիրաբերել այդ տարաբաղդ օրբերին մնացանելու և ազգային ոգով դաստիարակելու համար։

Նուիրատուութիւններ թէ դրամով և թէ զանազան իրերով՝ խնդրվում է ուղղել հետևեալ հասցէներին.

1) Միութեան նախագահ Արշակ Սաֆարեանին, Купеческій банкъ.
2) Միութեան անդամ-գանձապահ Յակոբ Տէր-Յարութիւնեանին, Кафе «Централь» (Эрив. площадь).
3) Միրանաւորի գաւթում կառավարչին։

(օ. մ.) առ. 658. 10—2 Հայրենակցական Միութիւն

Նազիայի Նկարչութեան ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ **Ե. ՊԱՏԿԱՆԵԱՆ** ԲԱՑ ԷԱՐԵԼ

ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Դրվել կարելի է երեկոյեան ժամը 5—7-ը, Բէբուտովսկայա փ. № 2, ա. Քիշմիշեանի։
առ. (ե. հ.) 664. 3—2

„ԶԻԹԵՆԻ"

ԳՐԱԿԱՆ ԱԼՄԱՆԱԽ

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՒ ՈՐԲԵՐԻ

մասնակցութեամբ հայ գրականագէտների և գրողների՝

Ալ. Ծատուրեանի, Վ. Տէրեանի, Ոսկրիչոս Անգիեանի, Մ. Վ. Մաքսուտեանի, Յ. Կոստանեանի, Յ. Յովհաննիսեանի, Ա. Զահեանի, Լ. Գրիգորեանի, Կ. Կամարի, Տ. Տէրունիի, Գ. Քալաշեանի, Հ. Մազմանեանի, Շիրվանզադէի, Վ. Փափազեանի, Ստ. Մալխասեանցի, Գ. Զուբարի, Կ. Կոստանեանի, պրոֆ. Ս. Եղիազարեանի, Հ. Առաքելեանի, Գ. Բաշինջաղեանի, Ա. Եղեկեանի, Ալ. Աբէլեանի, Լ. Քալանթարի, Բ. Իշխանեանի, Դ. Անանունի, Սուրխաթեանի, Սմ. Տէր-Աւետիքեանի, Ա. Աթանասեանի, իշխան Գ. Թումանեանի, Ա. Սարուխանի, Ա. Ֆէթվաճեանի, Ռ. Խան-Ազատի, Յ. Մալխասեանի, Յ. Ակունեանի, Ստ. Զօրեանի, Վ. Նուրեանի, Կ. Միքայէլեանի, Գ. Լևոնեանի, Լևոն Բաշինջաղեանի։

Այս օրերս դուրս կը գայ մամուլի տակից։ Գինն է Թիֆլիսում 2 ռուբլի, Թիֆլիսից դուրս ճանապարհածախսով 2 ր. 50 կ.։ Յանկացողները ստանալ Ալմանախը դիմելու են այս հասցէով. Թիֆլիս, Հայ Նպաստամատոյց Ընկերութեան գրասենեակ, Սոլոմոնովսկայա № 21. Тифлисъ, Армянское О-во „НПАСТАМАТУЙЦЪ" Соломоновская, № 21.

Ի նկատի ունենալով Ալմանախի նպատակը, ցանկալի էր, որ ամեն մի անձ փութար ձեռք բերել և դրանով օգնել նաև օրբերի պահպանութեան։

Խմբագրական Յանձնաժողովը խնդրում է ինտելիգենտ անձանց տարածել Ալմանախը իրանց շրջանում։
առ. (օ. մ.) 669. 5—1

ՔԱՄՈՅԵԱՆ ԴՊՐՈՅԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

յայտնում է, որ շնորհիւ աշակերտուհիների մեծ քանակի՝ բացել է V զուգընթաց պատրաստական-դասարան։ Կան սահմանափակ թուով տեղեր V բաժանմունքում։ Աշակերտուհիների ընդունելութիւնը շարունակվում է։
առ. (ա. օ.) 661. 3—2 ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Բերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԲԵՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ, արհեստական ՆԵՂՄՈՏՈՒԹԻՒՆՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարները լուսաւորված ՊՐՆԳԷՆԵՆ ՇԱՆԹՈՒՑԻՆ ՇՈՒՄԱԳՈՅՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՀՔԱՒՈՐՆԵՐԻՆ առ ժ. 9—10 ՀՐԻ։ Бебутовская, 23. тел. 7—29
առ. (ա. օ.) 504. 100—42

ԲԺԻՇԿ

Շուշանիկ Նարարեան

(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)

Վերադառնալով հանդերձ՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։

Ընդունում է ամեն օր՝ (առ. ժ. 1—2. (եր. ժ. 4—6.

Հասցէն՝ Սոլոլակ, Բուլշևիկայա փ. № 1. Հեռախօս 10—58.
(ե.հ.կ.) առ. 634. 100—5

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

հինգշաբթի, սեպտեմբերի 24-ին, հասարակութեան խնդրանքով, 3-րդ անգամ կը ներկայացվի

ԱՍԻԱԿԱՆ ՈՒՐԱԽ ՕՊԵՐԵՏ

ՆԱ ՉԸ ԼԻՆԻ—ՍԱ ԼԻՆԻ

(Օ օլմասուն—բու օլսուն)

3 գործողութեամբ։

Սկիզբը երեկոյեան ժամը հինգ 8-ին։ Տեղերի գները 60 կ.-ից մինչև 1 ր. 50 կ.։ Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ վճարում են—տղամարդիկ 50-ական կոպ., կանայք և ուսանողները 25-ական կոպէկ։

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ

ԿԷՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պլոմբ—ոսկուց, արծաթից, ֆարֆորից և այլն։ Նամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց բիմբի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով։

Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երկ. Ներսիսովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից։

(ա. օ.) առ. 515. 100—33

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
19—20 սեպտեմբերի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Սեպտեմբերի 17-ին Օլթիի ուղղութեամբ մեր հետախոյզ զօրախմբերը գործում էին ազող։

Մանագկերտի ուղղութեամբ ընդհարումներ են Մօլլա-Ալի և Դօսիան գիւղերի մօտ մեր հեծելազօրի և թիւրքերի միջև։

Վանի շրջանում մեր զօրքերը ետ են մղում թիւրքերին Ոստանի մօտ։

Մնացած զօրաճակատում փոփոխութիւն չը կայ։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Սև ծովում մեր ռազմանաւերը ռմբակոծեցին և նորից աւերեցին Զունգուլդակում քարածխային հանքերի վերանորոգված շէնքերը։ Նաւահանգիստը պաշտպանող մարտկոցները շուտով լռութեան մատնվեցին։

Սեպտեմբերի 18-ին Օլթիի ուղղութեամբ թիւրք հետախոյզների փորձը՝ առաջանալու Բարակէտ և Զիլգասօր լեռների միջև՝ խափանվեց։

Վանի շրջանում մեր զօրքերը շարունակելով ետ մղել հակառակորդին Ոստանից դէպի արևմուտք, կուից յետոյ ձեռք ձրգեցին նրա դիրքերը։

Հետապնդելը շարունակվում է։

ԱՆԳԼՈ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
19 սեպտեմբերի

ԹԷՀԵՐԱՆ.—Անգլիացիների շարժումը դէպի Բաղդադ շարունակվում է չափազանց եռանդով։ Թիւրքերը կորցրին 1700 գերի, շատ թնդանօթ և ռազմամթերք։ Անգլիացիք հետապնդում են նրանց զինուորական աւտոմոբիլներով, նաև Տիգրիսի վրայով լողացող մոտորային նաւերով։ Անգլիացիք, վերջին տեղեկութիւնների համաձայն, մօտենում են Կազիզիային, որ գտնվում է Բաղդադից 100 վերստ հեռու։

ՍՈՍԿԱԼԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ստոյգ աղբիւրից տեղեկանում ենք, որ Կ. Պոլսի հայոց Պատրիարքարանը կարողացել է հասցնել մի տեղեկագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որի մէջ գուժում է, թէ, ստացված տեղեկութիւնների համաձայն, Թիւրքիայի մէջ կոտորված, ջարդված, հարեմները գերի տարված հայերի թիւը հասնում է 850 հազարի։

Այս սոսկալի ահռելի իրականութեան առաջ մեր ձեռքը թուլանում է որևէ բան գրելու։

Տարաբաղդ, նահատակ ազգ։

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ՍԱՄՍՈՒՆՈՒՄ

«Բ. Շ.»-ին հաղորդում են Սամսունում տեղի ունեցած հայերի ապստամբութեան մանրամասնութիւնները։

Երբ յունիսին սկսվեց ռուսների նահանջը Կօփ-Կամուրջ գծից, Թիւրք կառավարութեան ձեռք առած միջոցներից հայերը գլխի ընկան, որ պատրաստութիւն է տեսնվում ընդաջնջելու հայերին Մուշի հովտում և Սամսունում։ Նրանք մտադիր էին դիմադրել հովտում, դանդաղօրէն նահանջելով դէպի Սամսունի բարձունքները, ուր ամրացել էին ապստամբները, բայց այդ ծրագիրը նրանց չյաջողվեց, և նրանք չը կարողացան ազգաբնակութիւնը քաշել դէպի Մուշ։

Կոտորածից առաջ Մուշի վալին դիմեց Վարդան եպիսկոպոսին՝ առաջարկելով տեղեկացնել հայ ազգաբնակութեանն այն մասին, որ մտադրութիւն կայ հայ ազգաբնակութիւնը շտապով փոխադրել Մուշի հովտից, ռուսների առաջանալու պատճառով։ Այնուհետև մի քանի օրից եպիսկոպոսը մի քանի քահանաների հետ ձերբակալվեց, մեղադրվելով պետական դաւաճանութեան մէջ, և պատժվեց։ Հէնց նոյն օրը կոտորած ըսկսվեց Խարզան գիւղում, որ Մուշից 30 վերստ հեռու է։ Մուշի հովիտը բերվեցին մեծաքանակ զօրքեր Կօփից, Ախլաթից և Բիթլիսից, և հաղորդակցութիւնը ընդհատվեց առանձին գիւղերի միջև։ Յունիսի 27-ին կոտորած սկսվեց արդէն ամբողջ հովտում։ Ինքնապաշտպանութեան համար պատրաստված զինված ազգաբնակութեանը թիւրքերը ճնշում էին թեական գերազանցութեամբ և մասամասնում։ Առանձին գիւղերում և հէնց Մուշի մէջ մի քանի տասնեակ զինված հայեր ամրանալով դիմադրեցին օր օրէ կէս ետ մղելով թիւրքերին մինչև այն ժամանակ, երբ թիւրքերը այրեցին հայկական թաղերը։ Դիշերը հայերը դուրս եկան իրանց տեղից, կարեցին թիւրքական շղթան և ազգաբնակութեան մի մասի հետ նահանջեցին դէպի Սասունի լեռները, ուր ամրացան Բերդակ լեռան վրա, որ 4 ժամվայ ճամբայ է Մուշից։

Նրանց մասին առ այժմ տեղեկութիւն չը կայ։

Նոյն գիշերը թիւրքերը վերցրին Մուշի մօտ երկու գիւղ, որոնց բնակիչները դիմադրեցին մինչև զնդակների խպտա հատնելը։

Իսկ Սասունում Ռուբէնը և Կոմը 650 զինուորով (կամաւոր) և մշեցի ուրիշ տեղացի 12000 փախստականի հետ եռանդով պաշտպանվում էին թիւրքերի դէմ, որոնք կենտրոնացրել էին մի դիվիզիա արտիլերիայով և 3000 համիդիական։

Աւելի քան երկու շաբաթ տեւեց այս կռիւը, մինչև որ վերջապէս թիւրքերը արտիլերիական սարսափելի կրակ բանալով դաւաչեցին Ցիրէնի կարեոր դիրքը։

Թէ ինչ դրութեան մէջ են այժմ ապստամբները, ոչինչ յայտնի չէ առ այժմ։

ԳԵՐՄԱՆԱՑԻՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Գերմանացի յայտնի գրող Ֆրիդրիխ Նաումանն, որ առանձնապէս յայտնի է իր անդուլ պրօպագանդայով յօգուտ լութերական եկեղեցու և սօցիալիստական հասանքների միջև եղած տարաձայնութեան վերացման, այժմ միայն հանդէս է եկել իր թերթում հայերի հալածանքի դէմ, որ տեղի է ունենում Թիւրքիայում։

«Վանի յուզմունքից յետոյ,—գրում է Նաումանն,—թիւրք կառավարութիւնը թիւրքական գործող բանակի մէջ մացրել է բոլոր այն հայերին, որոնք ընդունակ են զէնք կրելու, և կանանց, երեխաներին ու ծերերին արտաքսել Միջագետք։ Անբաղդները, այժմ կարված հայրենի օջախից, ենթարկվեցին անեբակայելի զրկանքների։ Նրանցից շատերը մեռան Միջագետքի ճամբին։ Հայ ժողովրդի զեկավարները մասամբ գնդակահարված են, մասամբ առապում են բանտերում»։

Յետոյ Նաումանը խօսում է գերմանական բողոքականների օրգան «C. W.»-ի մէջ նկարագրված թիւրքահայերի ողբերգական դրութեան մասին տպված ցնցող նկարագրութիւնների վրա։

«Գերմանական հասարակութիւնը և գերմանական կառավարութիւնը միանգամայն անգիտանում են հայերին։ Մինչդեռ հալածանքից ազատ մնացած հայերը արժանի են լաւագոյն վիճակի և կարող էին յոյս ունենալ առաւել ուշադիր վերաբերմունքի Գերմանիայի կողմից»։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
19—20 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Գերմանիացիների յարձակումները Դրօս-Էկաու շրջանում շարունակվեցին, բայց աջողութիւն չունեցան։

Գերմանացիք ծանր թնդանօթներից ռմբակոծեցին Եակօբշտատից դէպի հարաւ-արևելք Լիվէնհօֆ կայարանը։

Դվինսկի մօտ գերմանացիների յարձակումից մեր զօրքերը թեթև ետ քաշվեցին մի քանի կէտերից երկաթուղագծի և Սվենտ լճի միջև։ Դիմէն լճերի և Դրիսվեատայի միջև թնդանօթային կռիւ է։ Սվինտեամ լճից դէպի արևելք մեր հեծելազօրը ցիրուցան արեց գերմանացիներին և գրաւեց Պոստաւա գիւղը։ Սուբնային կուից յետոյ մենք գրաւեցինք Զերէմիշչա գիւղի մօտի գերեզմանատունը և Բերէժնայա գիւղը։ Հակառակորդը վանվեց բաւական դէպի արևմուտք Վիլէյկա-Պոլսկ երկաթուղու շրջանից։

Վիլիայի մօտ, Պերէվոզ գիւղից ոչ հեռու, Սմօրգօնից դէպի հիւսիս յամառ կռիւները շարունակվում են։ Զալուժէ գիւղի մօտ կուի մէջ մեր գումարտակներից մինը վանելով թշնամուն և ինքը կորցնելով միայն 9 մարդ՝ գերեց 2 գերմանացի օֆիցէր և 109 զինուոր։

Միջին Սաբրի շրջանում, Լամանէ գիւղի մօտ, Կոլկից դէպի հարաւ-արևելք յամառ կռիւը չէր դադարում երեկվայ ամբողջ օրը։ Իրանց հաւասարակշռութիւնը կորցրած հակառակորդների զաղանութիւնները չեն վերջանում։ Օրինակ՝ մի տեղում գտնվեցին վիրաւոր գերի ընկած մի օֆիցէրի և երկու զինուորի դիակ, որոնց աչքերը հանված էին, տասմերը փշրված հայն։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից։

Դվինսկի մօտ գերմանացիք փորձեցին մտնել Իլուքստից դէպի հարաւ-արևմուտք դտնվող երկաթուղային շրջանը, բայց մենք արգելք եղանք։

Դէմմէն-Դրիսվեատա-Բօգինսկօէ լճերի զօրագծի վրա հրային կռիւ է։ Դրիսվիատա լճից դէպի հիւսիս՝ Դրեզնոսլ շրջանում գերմանացիք մեր թնդանօթաձգութիւնից յետոյ փախան՝ թողնելով Տիլա գիւղը։ Թշնամին փորձեց անցնել Դրիսվիատան՝ Պելիկանի և Կուպիշկի գիւղերի միջև, բայց ետ նաստեցինք։ Մեր հեծելազօրը վանեց գերմանացիներին Բարսուկի գիւղից։ Դեվեատինկա գիւղի վրա գործած յարձակման ժամանակ շատ գերմանացի սրի քաշվեցին։ Ստոլսովցին վերցնելիս մենք տաք կռիւ ունեցանք թշնամու հետ։ Իրանց մրրկային սոսկալի կրակով գերմանացիք մեզ ետ մղեցին Ստոլսովցիից։ Նոր յարձակումով մեր զօրքերը երկրորդ անգամ վանեցին թշնամուն այդտեղից։ Առաջին յարձակման ժամանակ մենք ձեռք ձգեցինք գերմանական 8 գաւբից և

6 թեթև տեսակի թնդանօթ։ Մինչև գերմանացիների հակայարձակումը անկարելի եղան թնդանօթները տանել և մենք փչացրինք նրանց։

Սուլինային յարձակումով մեր զօրքերը գրաւեցին թշնամու ամրացրած խրամատները Բալտագուլի գիւղի մօտ։ Սվիրիդովիչի շրջանում թշնամու երկու յարձակումը վանվեցին թշնամու համար մեծ կորուստներով։

Լիւբչայի մօտ Նէմանն անցած գերմանացիները վանվեցին գետի ձախ ափը և փութանակի նահանջեցին, թողնելով մօտ 100 դիակ։

Ստիրի գետի մօտ, Նովոաէլիկ-Կուլիկովիչի գիւղերի շրջանում տեղի ունեցան մի քանի մանր ընդհարումներ։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՈ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
19—20 սեպտեմբերի

ՊԱՐԻԶ.—Երեկոյեան և ցերեկվայ պաշտօնական հաղորդագրութիւններ.

Արտաւայում թշնամին ուժեղ ռմբակոծութեան ենթարկեց Սուշէից դէպի արևելք ընկած մեր դիրքերը։ Բայց և այնպէս մենք բաւականին առաջացանք և խրամատներ փորեցինք Պաֆօլի գագաթների վրա։

Գերմանացիք գիշերվայ ընթացքում ռմբակոծեցին մեր նոր զօրագծերը Էպին Դը-վէդ-Գրանժի մօտ։ Մեր զօրքերը ձեռք ձգեցին թշնամու կարևոր դիրքերից մի քանիսը Մէնիլից դէպի հիւսիս։

Մեր օդաչուները բազմաթիւ ռումբեր նետեցին թշնամու երկաթուղագծերի և կայարանների վրա։

ԼՕՆԴՕՆ.—Ֆէլդմարշալ Ֆրէնչը տեղեկացնում է.

Թշնամին սեպտեմբերի 16-ին մի շարք յարձակումներ գործեց մեր դիրքերի վրա Գիւլուլիից դէպի հիւսիս-արևմուտք։ Օրվայ ընթացքում տեղի էր ունենում յամառ կռիւ, որի հետևանքում մենք մնացինք մեր բոլոր դիրքերում, բացի ծայրի ձախ զօրաթևից, ուր մենք կորցրինք 150 եարդ խրամատ։ Մեր դիրքերը գրաւված են շատ ամուր։ Թշնամու յարձակումներն այժմ թուլացել են։

Մեր օդաչուները եռանդուն գործունէութիւն ցոյց տուին անցեալ շաբաթում. տեղի ունեցան 16 կռիւ օդի մէջ և միայն մի դէպքում անգլիացի օդաչուը պարտվեց։ Գերմանական աէրոպլաններից մինը ստիպված եղաւ իջնել մեր զօրագծի վրա։ Մեր օդաչուները փչացրին երկաթուղագիծը 15 տեղում, վնասեցին 6 գնացք, հրդեհեցին Վալամսենի դեպօն։

ՀԱՒՐ.—Բէլգիական հաղորդագրութիւն. Թշնամին ռմբակոծում է Բամսկապելէն և այլ տեղեր մեր զօրաճակատի վրա։

Դիկսմիւդէի շրջանում կռիւ էր ռումբերի օգնութեամբ։

ՊԱՐԻԶ.—Երեկոյեան և ցերեկվայ պաշտօնական հաղորդագրութիւններ.

Բէլգիայում մանակցից անգլիական նաւատորմը սկսած ռմբակոծութեանը Վեստենդէի մօտ։

Արտաւայում թշնամին ուժեղ ռմբակոծութեան ենթարկեց Նէվիլ-Սենլասատ զօրաճակատը և Սուշէից դէպի հիւսիս ընկած անտառը։ Մենք եռանդով պատասխանում էինք։

Ուժեղ թնդանօթային կռիւ տեղի էր ունենում Բէրբի-օ-Բակից դէպի հիւսիս Կոլէրի ուղղութեամբ և Սապէմիէի երկարութեամբ։

Շամպանիում թշնամին գործադրեց խեղդող գազեր։

Մասի և Մոզելի միջև թշնամին մեր դիրքերի դէմ սկսեց մբրկային կրակ, որը սակայն լռեց մեր հրետանիների կրակից։

Լոթարինգիայում մենք վանեցինք թշնամու խոշոր ոյժերի յարձակումը։

65 աէրոպլան ռումբեր նետեցին Վուլիէի երկաթուղային կայարանը և քաղաքի մօտի աէրոդրոմը։ Նոյն աէրոպլանները նետեցին աւելի քան 300 ռումբ, օրանք հասան նպատակին։ Մի այլ տեղում ռումբերից ջարդ փշաց եղաւ մի գնացք Լան կայարանի մօտ։

Սուշէի և Ժիվանշի անտառի միջև թշնամին 4 անգամ փորձեց ձեռքի ռումբերով յարձակում գործել և գրաւել իր կորցրած խրամատները, բայց ամենուրեք նա վանվեց։

Շամպանիում գերմանացիների հակայարձակումը վանվեց։

ԼՕՆԴՕՆ.—Ֆէլդմարշալ Ֆրէնչը տեղեկացնում է. «Անցեալ գիշեր մենք յարձակում գործեցինք և ձեռք ձգեցինք գերմանական խրամատները Լոոսից դէպի հարաւարևմուտք»։

ՀԱՒՐ.—Բէլգիական հաղորդագրութիւն. «Առաւօտեան թշնամին ցոյց արաւ Դիկսմիւդէի մօտ, նետելով ռումբեր և սկսելով ուժեղ թնդանօթաձգութիւն։ Թշնամին մեր դէմ արձակեց 400 ռումբ և կարողացաւ գրաւել մեր խրամատների մի մասը, բայց շատով էլ վանվեց այնտեղից»։

ԱՒՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
19 սեպտեմբերի

ՀՌՕՄ.—Գլխաւոր բանակից հաղորդում են. «Լեռնային մասում խիտ մառախուղները արգելք են լինում մեր թնդանօթային կրակին, բայց թոյլ են տալիս երբեմն մեր հետևակ զօրագնդերին հաստակամ արշաւանքներ կատարել փոքրաթիւ զօրամասերով, օրանք մեծ անհանգստութիւն են պատճառում թշնամուն։

«Տօլմինոյի մօտ մեր զօրքերը լոյս սեպտ. 17-ի գիշերը յարձակում գործեցին Մոզլից մինչև Վոգել ընկած զօրաճակատի վրա և Սանտա-Մարիա և Սանտա-Լուչիա գագաթների վրա, ըստ օրում նրանց աջողվեց, չնայած սեղմ վատ պայմաններին և անընդատ եղանակին, վերցնել գերիներ։ Թշնամու մեծաթիւ ոյժերի կրկնակի հակայարձակումներից մենք անկարող եղանք պահել մեր ձեռքում գրաւած տեղերը։ Մրցան Սանտա-Մարիայի և Սանտա-Լուչիայի շրջանում, աջ զօրաթևի վրա, մեզ աջողվեց պահել գրաւած տարածութիւնը»։

ՀՌՕՄ.— Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Իզոնցո գետի ամբողջ զօրաճակատի վրա թշնամին երեկ ասարկ թնդանօթաձգութիւն և հրացանաձգութիւն էր սկսել։ Հեսիան զօրաշդրը ոչ մի յարձակման չը ձեռնարկեցին։

Նբէկ թշնամու մի օդաչուց մի քանի ռումբեր նետեց Զիրվինիանոյի կայարանի մօտ, որոնցից վիրաւորվեցին երկու քաղաքացի։ Երկու ուրիշ օդաչուց փորձեցին թռիչք կատարել Կարսոյում մեր դիրքերի վրա, բայց վանվեցին մեր թնդանօթային կրակից։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
20 սեպտեմբերի

ՆԻՇ.—«Պրէսս Բիւրօն» յայտնում է, որ սեպտ. 16-ին Կուռնայի զօրաճակատի վրա թշնամին սկսեց ամրութիւններ կառուցանել Օրշովի մօտ, բայց մեր թնդանօթային կրակն արգելք եղաւ թշնամու աշխատանքներին։ Թշնամին կամաւոր ձգեց Բաումի դիմաց։ Նեղն ընկնելով մեր թնդանօթային կրակից, թշնամին արձակեց 60 ռումբ, բայց մեր արտիլէրիան լռեցրեց ստիպեց թշնամու արտիլէրիային։

Թշնամու օդաչուները սեպտ. 17-ին 43 ռումբ նետեցին, օրանցից սպանվեցին 5 և վիրաւորվեցին 10 մարդ. ռումբերն ընկան Լապօվօ կայարանի վրա և ոչ մի վնաս չը պատճառեցին։

Կրագուէվացի շրջակայքում ընկաւ թշնամու մի աէրոպլան։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՎԵՐՋՆԱԳԻԾԸ ԲՈԼԳԱՐԻԱՅԻՆ

(Պետ. Հեռ. Գործ.)
20 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Արտաքին գործերի մինիստրութիւնը յայտնում է ի գիտութիւն բոլորի, որ Սօֆիայում պաշտօնավարող Կայսերական դեսպանին յանձնարարված է յանձնել բոլգարական կառավարութեանը հետեւեալ վերջնագիրը։

Ներկայումս Բոլգարիայում տեղի ունեցող դէպքերը վկայում են, որ Ֆէրդինանդ արքայի կառավարութիւնը վերջնականապէս վճռել է երկրի վիճակը յանձնել Գերմանիայի ձեռքը։ Զինուորական մինիստրութեան և զօրաբանակների շտաբների մէջ գերմանացի և աւստրիացի օֆիցէրների ներկայութիւնը, Սերբիային սահմանակից շրջանում զօրքեր կենտրոնացնելը և այն ֆինանսական լայն օգնութիւնը, որ ստանում է Սօֆիայի կաբինէտը մեր թշնամիներից, կասկած չեն թողնում, թէ ում դէմ են ուղղված բոլգար կառավարութեան ներկայ ռազմական պատրաստութիւնները։

Համաձայնութեան մեծ պետութիւնները, որոնք իրանց սրտին մօտ են վերցրել բոլգար ժողովրդի ակնկալութիւնների ու յոյսերը ազատութիւնը, քանիցս նախազգուշացրին պ. Բաղօլավօվին, որ Սերբիայի դէմ ամեն մի թշնամական գործողութիւն նրանք կը համարեն իրրև հէնց իրանց դէմ ուղղված գործողութիւն։ Կաբինէտի պարագլխի պատասխան-հաւաստիացումներին հակասական են փաստերը։ Ռուսաստանի ներկայացուցիչը, այն երկրի, որ միացած է Բոլգարիայի հետ թիւրքաց բռնակալ լծից ազատագրելու անթաւամ յիշողութեամբ, չէ կարող մնալ Բոլգարիայում, ուր պատրաստվում է եղբայրասպան յարձակում դաշնակից սլաւոն ժողովրդի վրա։

Կայսերական դեսպանը ցպատուիրագրութիւն է ստացել մեկնել Բոլգարիայից միասին և հիւպատոսարանների ամբողջ կազմով, եթէ 24 ժամվայ ընթացքում բոլգար կառավարութիւնը չը խզէ բացարձակապէս իր կապերը սլաւոնականութեան և Ռուսաստանի թշնամիների հետ և միջոցներ ձեռք չառնէ անյապաղ հեռացնելու զօրքի միջից համաձայնութեան պետութիւնների դէմ կուռող տէրութիւնների օֆիցէրներին։

ԲՈԼԳԱՐԻԱՆ, ՅՈՒՆԱՍՏԱՆԸ ԵՒ ՐՈՒՄԻՆԻԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

(Պետ. Հեռ. Գործ.)
19—20 սեպտեմբերի

ԼՕՆԴՕՆ.—Գրէյը թոյլատրեց հրատարակել հետևեալը. «Տեղեկութիւններ են ստացվել, որոնց համաձայն վերջին օրերս բոլգար զօրքի մէջ են մտնում գերմանական և աւստրիական օֆիցէրներ։ Գերմանացիների գործելակերպը ներկայ դէպքում բոլորովին միևնոյն է, ինչպիսին նրանք գործադրում են Թիւրքիայում, ուր գերման օֆիցէրները ստիպեցին Թիւրքաց կառավարութեանը՝ յայտարարել պատերազմ Ռուսաստանին առանց որևէ մարտակոչի վերջինիս կողմից։ Եւ որովհետև դաշնակից մեծ պետութիւնները պարտաւորվել են աջակցութիւն ցոյց տալ այն պետութիւններին, որոնց սպառնում է բոլգարների այդօրինակ գործելակերպը, ուստի վերոյիշեալ տեղեկութիւնները այստեղ համարում են չափազանց լուրջ»։

ՊԱՐԻԶ.—«Թանի» տեղեկութիւնների համաձայն, քառեակ համաձայնութեան պետութիւնների ներկայացուցիչները Սօֆիայում իրազեկ են արել բոլգար կառավարութեանը, թէ յիշեալ մեծ պետութիւնները վճռել են աջակցութիւն ցոյց տալ Սերբիային այն դէպքում, եթէ Բոլգարիան յարձակում գործէ։

ԱԹԷՆՔ.—Լրագիրները շարունակում են առաջնորդող յօդուածներ նուիրել Բոլգարիայի քաղաքականութեանը, յորդորելով համաձայնութեան պետութիւններին արագացնել բանակցութիւնները, որպէս զի կարելի լինի աւարտել այդ բանակցութիւնները մինչև բոլգարական զօրահանութեան վերջանալը և գերմանական զօրքերի կենտրոնանալը սերբիական սահմանագլխի վրա։ Լրագրական յօդուածների մէջ մատնանշվում է, որ յունաց կառավարութիւնը վճռել է պաշտպանել թեկուզ զէնքի ոյժով ազգային երկրի անձեռնմխելիութիւնը և Բուխարեստի պայմանագրի որոշումները։

ՊԱՐԻԶ.—«Թանի» ասելով, մօտիկ ապագայում ֆրանսիական զօրքերը երևալու են Մակեդոնիայում. օր-աւուր ապասվում է տեղեկութիւն, թէ Սօլունում զօրքերը ափ են իջել։

ՍՕՖԻԱ.—Երէկ եկաւ ֆրանսիական զօրքերի առաջին զօրաբաժինը, որ մեկնում է Սերբիային օգնելու։

ՍՕՖԻԱ.—Ասելով ֆրանսիական և ռուսական մամուլի թշնամական վերաբերմունքի մասին, պաշտօնական «Նարօդնի Պրաւան» ասում է. «Բոլգար կառավարութիւնը օտար է արկածախնդրութեան ամեն մի քաղաքականութեան և կարող է հաւատացնել երկրին, որ չի գործի որևէ անզգոյշ քայլ։ Եթէ Բոլգարիան ստիպված լինի զէնքը ձեռքին միջամտել, նա կանէ այդ խաղաղ համաձայնութեան բոլոր միջոցները սպառելուց յետոյ միայն։ Կառավարութիւնը նախատեսել է բոլոր այն հանգամանքները, որոնցով պայմանաւորված են Բոլգարիայի սրբազան իրաւունքների իրականացումը, և թիւրք բոլգարական պայմանագիրը հանդիսանում է կառավարական քաղաքականութեան առաջին պտուղը։ Մենք հաւատացած ենք, որ այդ աջողութեանը կը հետևեն նման այլ աջողութիւններ»։

ՀՌՕՄ.—Ճշդելով այն տեղեկութիւնը, թէ դաշնակիցները վճռել են զօրք ափ հանել Ցունաստանում, պաշտօնական լրագիրը վաղաժամ է գտնում այն լուրերը, թէ իբր զօրքերն արդէն սկսել են ափ իջնել։ Սակայն, լրագրի կարծիքով, դաշնակիցները մեծ սխալ կը գործեն, եթէ ձգձգեն իրանց վճռի գործագրութիւնը մինչև այն բոպէն, երբ Բոլգարիան կը յարձակվի Սերբիայի վրա։ Լրագիրը կարծում է, որ դաշնակիցների վճիռը պէտք է ունենայ նախազգուշացման միջոցի բնոյթ, որպէսզի Մակեդոնիան գրաւելուց յետոյ Բոլգարիան այլևս անկարող լինի տեղից շարժվել։ Դրանով անկասկած առաջը կառնվի եղբայրասպան պատերազմի Բալկաններում և կը ստեղծվի մի կացութիւն, որը կը ստիպէ Բոլգարիայի թագաւորին և կառավարութեանը փոխել իրանց դիրքը։ Լրագիրը կասկածում է, որպէսզի Ֆէրդինանդը համարձակէ ուղարկել իր զօրքերը դաշնակիցների դէմ, մանաւանդ Ռուսաստանի դէմ, որը մօրալ կերպով կը մասնակցէ դաշնակից պետութիւնների արշաւանքին։

—

(Լրագիրներից)

✦ Կ. Պոլսից հաղորդում են, որ Բոլգարիայի և Թիւրքիայի միջև վերջին օրերը հաստատվել է ապրանքների կանոնաւոր փոխանակութիւն։ Ամեն օր Զաթալջայի վրայով անցնում են 50 վագոն։

✦ «Y. P.»-ն հաղորդում է, որ Բոլգարիան պատերազմ է յայտարարելու իր զօրահանութեան աւարտման օրը, այսինքն սեպտ. 23-ին։

✦ Քառեակ համաձայնութեան պետութիւնները Ցունաստանի համաձայնութեամբ զօրք են ափ հանելու յունական նաւահանգիստներում։ Ցունաստանը իր կողմից յարձակվելու է Բոլգարիայի վրա, երբ վերջինս սկսէ պատերազմական գործողութիւններ Սերբիայի դէմ։

✦ Բոլգարիան իր զօրքերի մի մասը կենտրոնացրել է Դոնայի վրա՝ Բաումինիայի դէմ։

✦ Վերջին տեղեկութիւնների համաձայն, Սօֆիայում տիրում է շատ լուրջ դրութիւն։ Հնարաւոր են ահեղ դէպքեր։ Օպոզիցիայի անդամների համատարած ձերբակալութիւններ են։ Խմորումը ստացել է ընդարձակ կերպարանք։ Մայրաքաղաքում յայտարարված է պաշարողական դրութիւն։ Ֆէրդինանդ արքայի կեանքը վտանգված է։ Լուրերի համաձայն, պատրաստվում է մահափորձ Բաղօսլավվի կեանքի դէմ։

✦ Արքայական կայանում Բոլգարիայի զօրահանութեան առիթով խիստ ճառ արտասանեց արտաքին գործերի մինիստր Սալոնօ-

---

6) Այս հարցին առարկելու ոչ մի արդարացուցիչ հիմք չեն կարող ունենալ Էջմիածնում գործող պատասխանատու մարմինները։ Նրանք չեն կարող ասել, որ Վաղարշապատ գիւղում հաղուստեղէն ձեռ ու կարող վարձու կանայք չը կան պահանջվող թուով։ Չեն կարող և իրաւունք չունեն այդպէս ասել, որովհետև Երևանն իրանց բթի տակ է և կարելի էր շուտափոյթ կարել տալ այնտեղ ցանկացած հագուստեղէնը փախստականների համար։

*) Ուժեղ թնդանօթային կռիւ տեղի էր ունենում Բէրբի-օ-Բակից դէպի հիւսիս Կոլէրի ուղղութեամբ և Սապէմիէի երկարութեամբ։

Շամպանիում թշնամին գործադրեց խեղդող գազեր։

Մասի և Մոզելի միջև թշնամին մեր դիրքերի դէմ սկսեց մբրկային կրակ, որը սակայն լռեց մեր հրետանիների կրակից։

Լոթարինգիայում մենք վանեցինք թշնամու խոշոր ոյժերի յարձակումը։

65 աէրոպլան ռումբեր նետեցին Վուլիէի երկաթուղային կայարանը և քաղաքի մօտի աէրոդրոմը։ Նոյն աէրոպլանները նետեցին աւելի քան 300 ռումբ, օրանք հասան նպատակին։ Մի այլ տեղում ռումբերից ջարդ փշաց եղաւ մի գնացք Լան կայարանի մօտ։

Սուշէի և Ժիվանշի անտառի միջև թշնամին 4 անգամ փորձեց ձեռքի ռումբերով յարձակում գործել և գրաւել իր կորցրած խրամատները, բայց ամենուրեք նա վանվեց։

Շամպանիում գերմանացիների հակայարձակումը վանվեց։

ԼՕՆԴՕՆ.—Ֆէլդմարշալ Ֆրէնչը տեղեկացնում է. «Անցեալ գիշեր մենք յարձակում գործեցինք և ձեռք ձգեցինք գերմանական խրամատները Լոոսից դէպի հարաւարևմուտք»։

ՀԱՒՐ.—Բէլգիական հաղորդագրութիւն. «Առաւօտեան թշնամին ցոյց արաւ Դիկսմիւդէի մօտ, նետելով ռումբեր և սկսելով ուժեղ թնդանօթաձգութիւն։ Թշնամին մեր դէմ արձակեց 400 ռումբ և կարողացաւ գրաւել մեր խրամատների մի մասը, բայց շատով էլ վանվեց այնտեղից»։

ԱՒՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
19 սեպտեմբերի

ՀՌՕՄ.—Գլխաւոր բանակից հաղորդում են. «Լեռնային մասում խիտ մառախուղները արգելք են լինում մեր թնդանօթային կրակին, բայց թոյլ են տալիս երբեմն մեր հետևակ զօրագնդերին հաստակամ արշաւանքներ կատարել փոքրաթիւ զօրամասերով, օրանք մեծ անհանգստութիւն են պատճառում թշնամուն։

«Տօլմինոյի մօտ մեր զօրքերը լոյս սեպտ. 17-ի գիշերը յարձակում գործեցին Մոզլից մինչև Վոգել ընկած զօրաճակատի վրա և Սանտա-Մարիա և Սանտա-Լուչիա գագաթների վրա, ըստ օրում նրանց աջողվեց, չը նայած սեղմ վատ պայմաններին և անընդատ եղանակին, վերցնել գերիներ։ Թշնամու մեծաթիւ ոյժերի կրկնակի հակայարձակումներից մենք անկարող եղանք պահել մեր ձեռքում գրաւած տեղերը։ Մրցան Սանտա-Մարիայի և Սանտա-Լուչիայի շրջանում, աջ զօրաթևի վրա, մեզ աջողվեց պահել գրաւած տարածութիւնը»։

ՀՌՕՄ.— Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Իզոնցո գետի ամբողջ զօրաճակատի վրա թշնամին երեկ ասարկ թնդանօթաձգութիւն և հրացանաձգութիւն էր սկսել։ Հեսիան զօրաշդրը ոչ մի յարձակման չը ձեռնարկեցին։

Նբէկ թշնամու մի օդաչուց մի քանի ռումբեր նետեց Զիրվինիանոյի կայարանի մօտ, որոնցից վիրաւորվեցին երկու քաղաքացի։ Երկու ուրիշ օդաչուց փորձեցին թռիչք կատարել Կարսոյում մեր դիրքերի վրա, բայց վանվեցին մեր թնդանօթային կրակից։

---

*) Ուրիշ եփելու գործը չատ խախտում հիմքերի վրա է դրված։ Նախ և առաջ բաւարարութիւն չէին տալիս կաթսաները, երկրորդ՝ թոյլ էր կազմակերպված եփած ջուրը մատակարարիլու գործը։ Միայն սեպտեմբերի սկիզբներին են ստացվել նոր կաթսաներ, այսինքն երբ արդէն ուշ էր և հում, վարակված ջրերն իրանց աւերումներն էին գործել։

*) Ջուր եփելու գործը չատ խախտում հիմքերի վրա է դրված։ Նախ և առաջ բաւարարութիւն չէին տալիս կաթսաները, երկրորդ՝ թոյլ էր կազմակերպված եփած ջուրը մատակարարիլու գործը։ Միայն սեպտեմբերի սկիզբներին են ստացվել նոր կաթսաներ, այսինքն երբ արդէն ուշ էր և հում, վարակված ջրերն իրանց աւերումներն էին գործել։

զամանում, անգամ այրանում էք, երբ տեսնում էք, որ միայն երեխաները կամ հիւանդները չեն այդպէս վարվում, այլ նոյնիսկ առողջ հասակաւորները։ Որ փախստականները առ հասարակ մաքրասէր չեն, դա նկատված ընդհանուր երևոյթ է և դրա մասին լաւ է, որ այստեղ չը խօսենք։

Այս բոլոր հանգամանքները՝ բացերն ու սխալները թէևուլց յետոյ, կարծում ենք, տարակոյս չը պիտի մնայ ընթերցողի մէջ, թէ ինչու մահացութեան դէպքերը օրէ օր սարսափելի չափերի է հասնում Էջմիածնի փախստականների մէջ. բացօդեայ կենցաղ, վարակված ջրեր, կեղտոտ, անխնամ մարմիններ, թռնատրված մշնոլորդ, գարշահոտ շրջապատ, վերջապէս անբաւարար ու անկանոն—«չօր հացին կապած»—սնունդ։ Ահա ծնող մայրերն ամեն կարգի հիւանդութիւնների և տարաբութիւնների. ահա իսկական դերեզմանափորները հազարաւոր ընտանիքների տասնեակ հազարաւոր առողջ կեանքերի։ Միայն այս կամ այն հիւանդութեամբ վարակված և արդէն մահվան ճամբան բռնած փախստականները չեն, որոնց տեսքը սարսափ է ազդում ձեզ վրա, հոգեվարքի դարաւումները դառն կսկիծով յուզում ձեր ներսը։ Շուրջ խմբված «առողջների» դալկահար դէմքերի վրա ևս կարդում էք չարագուշակ նշաններ։ Կարծէք մարդիկ մեռնում են՝ սատիճանաբար մահանալով. հիւծվում, մաշվում են, կմախքանում վերջին ծայր և ապա հեռահեռ հանգում ճարպի ադամ լոյսի նման։ Շարունակ մահացող ու մեռնող տեսարանների և անդադրում կուտակվող դիակների մշտական ակնատեսներն են առողջ մնացածները՝ մեծ ու փոքր, կին ու տղամարդ։ Կարծէք էք երևակայել այդպիսի մի զարհուրելի կշռար։ Չէ՞ տառապում արդեօք առողջ մնացածը, որ նոյն պայմաններում մնալով ինքը ևս վաղը միւս օրը պիտի անխուսափելիօրէն հեռանէ իր

---

*) Թոյլ էր բժշկական ինստիտուտիլիանը նաև հեմալանի շինութեան մէջ տեղաւորված երեխաների նըկատմամբ։ Հինգ ինքը տեղը չափազանց նեղ, ճնշված, անբաւարար էր երեխաների համար։ Երևակայեցէք 100-հոգու տեղ ունեցող նեղլանում դեռևս դրված էին 150 երեխաներ, իսկ 200 հոգի տեղաւորող ճեմարանը ամփոփել էր 200 երեխաներ։

1550—1760 հիւանդները, այս կամ այն եղանակով ենթակայ բժշկական խնամքի*)։ Իսկ ինչ են անում մնացած մօտ 1500 թշուառ հիւանդները, Աստուած գիտէ։ Նրանք բազմի քմահաճոյքին են թողված։ Դեռ մի կողմն ենք թողնում այն հանգամանքը, թէ ինչ բժշկական օգնութեան մասին կարող է խօսք լինել այն հիւանդների համար, որոնք դուրս են գտնվում հիւանդանոցներից և կենցաղավարում են այն անօրինակ, գարշահոտ մթնոլորտում, ուր խմբված են այսպէս անուանված «առողջ» փախստականները։ Աւելացրէք դրա վրա այն կատարեալ անփութութիւնը, որ նկատվում է գիշերները դէպի դուրսը խմբված՝ բացօդեայ ապրող հիւանդ փախստականները։ Հերթապահութիւն գոյութիւն չունի։ Տնքում, վայ են կանչում, օգնութիւն են աղերսում խեղճերը. ոչ օք չը կայ. ոչ դեղութեան քայլ, ոչ ֆելդշեր և ոչ բժիշկ։ Եւ դիահաւաքը դեռ առաւօտեանից աշխատանքի է ձեռնարկում. հաւաքում է գիշերվայ ընթացքում մեռածների դիակները։

Սանիտարական թոյլ հսկողութիւնը երևում է ամենից առաջ այն բանում, որ ոչ մի միջոց չի ձեռնարկված փախստականների շուրջը կուտակվող աղտոտութիւնների դէմ։ Շատ անգամ վանքի կամ ճեմարանի շակով անցնելուց ստիպված էք ձեր քիթը սեղմելու, իսկ այդ դժբաղդ ընտանիքները գիշեր ցերեկ մնում են այդ դարշահոտութեան մէջ։ Անշուշտ, իրանք փախստականները ևս անփոյթ են այդ բանում. մարդիկ աղտոտում են իրանց անմիջական շրջապատը, երկու քայլ հեռաւորութեան վրա, և

դաժբաղդ հարևանին։ Այդ հոգեկան սարսափը էլ աւելի է տրամադրում նրան մահվան թեկնածու դառնալու։ Եւ նման ապրումները նոյնքան համատարած են, որքան համաճարակ են մահաբեր բացիլները։

Բայց այդ բոլորի հանդէպ շարունակում են տակաւին էջմիածնում գործող մարմինները իրանց անհերելի անփութութիւնը ամենագլխաւոր հարցի նկատմամբ. կաշկանդել փախստականներին վանքում՝ բացօդեայ կենցաղով։ Զէնք հասկանում, ունի արդեօք էջմիածինը պայմանագիր ընութեան հետ, որ սա անձրևներ չը տեղայ Արարատեան դաշտում մինչ այն ժամանակ, երբ ինքը վերջապէս կը բարեհաճէ մահացող, ջնջվող ժողովրդին փրկել կացութեան անօրինակ պայմաններից։ Արդէն սեպտեմբեր ամիսն է, անձրևային եղանակները մօտ են մեր շեմքին, իսկ էջմիածնում դեռ նոր են նախագծել բարակներ կառուցանելու։ Իսկ սակ նախագծից մինչև գործի կենդանի իրականացումը, դժբաղդաբար, երկար տարածութիւն կայ՝ ըստ հայկական հաստատութիւնների աւանդական դանդաղկոտութեան։ Եթէ մինչև այժմ փախստականները գոնէ պատապարված լինէին վրանների տակ, այդքան հարկադրական չէր լինի բարակների հարցը։ Բայց իր ժամանակին չեն կառուցվել վրանները, այժմ էլ դանդաղում է բարակների կառուցման գործը։ Ինչու զարմանալ այնուհետև, որ մահվան դէպքերը ահռելի չափերի են հասնում, որ Արարատեան աղատ դաշտը դարձել է մի իւրօրինակ ռազմարան՝ իր դիակոյտերով և մասսայական գերեզմանոցներով։

Բայց ամէն է իսկական պատասխանատուն այս յանցաւոր անփութութեան հանդէպ։

Բ. Իշխանեան

վը։ Պարզվեց, որ մինիստրների մեծ մասը կողմնակից է ձեռք առնել ամենավճռական միջոցներ Բոլգարիայի դեմ՝ կանգ չառնելով անգամ վերջնագիր ներկայացնելու առաջ։

◆ Գերմանիայի և Աւստրիայի հիմնական նպատակն է Բոլգարիայի վրայով և նրա օգնութեամբ ներս խուժել Թիւրքիա։

◆ Սոֆիայում խորհրդակցում են բոլգարական, Թիւրքական և գերմանական շտաբների ներկայացուցիչները միացեալ պլան մշակելու համար։

◆ Բոլգարիան սերբիական սահմանագլխում կենտրոնացրել է 100,000 զինուոր։

◆ Ռուս սլաւոն գործիչները պահանջում են ուղարկել ռուսական նաւատորմը Վառնա և պաշարել Բոլգարիան։

◆ Հերքվում է այն լուրը թէ քառեակ համաձայնութիւնը ուլտիմատում է ներկայացրել Բոլգարիային։ Համաձայնութեան պետութիւններն առ այժմ սպասողական դիրք են բռնել։

◆ «Բ. Շլ.»-ին հեռագրում են Բոլգարիայից, որ գերմանական օֆիցէրներն են ղեկավարում բոլգար զօրքին, որոնց նրանք կենտրոնացնում են սերբիական սահմանագլխի վրա։

◆ Բոլգարիան շտապով ծովային նաւեր է գնում Ռումինիայում։

◆ Բոլգար-սերբիական սահմանագլխում սկսվել են զինված ընդհարումներ։

◆ Անգլիացի, ռուս և ֆրանսացի թղթակիցները մեկնել են Սոֆիայից։

◆ Բոլգարիայից ստացված տեղեկութիւնների համաձայն, Վառնայից տարել են բոլոր բանկերը։

◆ «Նէյէ Ֆրէյէ Պրեսսէ»ն հաղորդում է, որ բոլգարական զօրքի գլխաւոր հրամանատար և բոլգարական գեներալ-շտաբի պետ նշանակվել է Բոյկարէվը։

◆ Բուխարէստից հաղորդում է, որ թագաւորը մերժեց ունկնդրութիւն տալ այն բոլգար լիազօրին, որը բերել էր իր հետ Ֆերդինանդ արքայի նամակը։

◆ Բոլգարական գահաժառանգ իշխան Բորիսը, որ ստանձնել է բոլգար զօրքերի գերագոյն հրամանատարութիւնը, մեկնել է Ֆիլիպպոլի, ուր դիտելու է զօրքերին։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

19—20 սեպտեմբերի

ԼՕՆԴՕՆ.—Մամուլի բիւրօն յայտնում է, որ պետական գանձատան կանցլերի և ռուսաց ֆինանսների մինիստրի միջև տեղի ունեցող խորհրդակցութիւնները յանգեցին նպաստաւոր հետևանքի։ Վերջնականապէս մշակված է միասին գործելու ծրագիր։

ՏՕԿԻՕ.—Զինուորական մինիստրութեան հրացանային բաժնի պետը յայտնում է մամուլի մէջ, որ ռուսական գործարանների կողմից սպասվող հրացանների պատուէրները շտապով կատարելու նպատակով Օսակիի զինանոցը ժողովել է աւելի քան 200 զանազան գործարանատիրոջ՝ հրացանների երկրորդական մասերի պատրաստումը նրանց մէջն բաժանելու համար։ Իսկ հրացանների գլխաւոր մասերը պատրաստելու են արքունի զինանոցները, որոնք աշխատեցնում են մեծ թւով բանւորներ։

ՆԻՒ ԵՕՐԿ.—Անգլո-ֆրանսական փոխառութեան ստորագրութիւնն արդէն տուաց 400 միլիոն դոլլարից աւելի։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Փախստականների հարցով զբաղվող առանձին յանձնաժողովը որոշեց հիմնել գլխաւոր լիազօրների պաշտօններ, որոնց պարտականութիւնն է լինելու ղեկավարել փախստականներին որոշված տեղերում բնակեցնելու, նրանց այդ տեղերը ուղարկելու և խնամելու գործը։

ՊԱՐԻԶ.— Եկաւ Լօնդօնից ֆինանսների մինիստր Բարկը։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Հրատարակվեց բարձրագոյն հրաման զէնքի կոչելու Պրիամուրի գեներալ-նահանգապետութեան բոլոր նահանգներում 1-ին և 2-րդ կարգերի երկրապահ զինուորներին։

Գերագոյն զօրահրամանատարի կայանից եկաւ ֆրանսական զինուորական միսիան գեներալ դ'Ամադի գլխաւորութեամբ։

ԼՕՆԴՕՆ.— Պաշտօնապէս հաղորդվում է, որ վերջին շաբաթում մինչև սեպտ. 16-ը Ջրասուզվել են ընդամենը 6 շոգենաւ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ «Petit Parisien»-ն այն կարծիքն է յայտնում, որ Բուկովինայում և Տրանսիլվանիայում աւստրօ-գերմանական օյժերը կենտրոնացնելը, Բուլղարիայի վերաբերմամբ հանդիսանալով սոսկ մօրալ ազդեցութեան միջոց, նպատակ ունի սկիզբ դնել աւելի ակտիվ գործողութիւնների ռուսական զօրաճակատի ձախ զօրաթևի դէմ։

◆ Գերմանական մամուլը համոզում է Սերբիային կնքել անջատ հաշտութիւն։

◆ Ամստերդամից տեղեկացնում են, որ 32 գնացք գերմանական զօրքերով անցան դէպի արևմտեան զօրաճակատ։

◆ Շվեյցարիան պատրաստութիւններն է տեսնում յայտարարելու զօրահանութիւն։

◆ Վիլհելմ կայսրի նախագահութեամբ Ալզասում տեղի է ունեցել զինուորական խորհուրդ Շամպանիում կրած պարտութեան առիթով։

◆ Վիլհելմ կայսրը յայտնել է Բոլգարիային, որ Ալբանիան նա իր հովանաւորութեան տակ է առնում։ Ալբանիայում արդէն կազմակերպվում են հրոսակախմբեր։

◆ «Բ. Բ.»-ն յայտնում է, որ պատերազմի մի տարում ճան. հաղորդակցութեան մինիստրութեան ծառայողները և բանւորները իրանց շրջանում հանգանակել են 6 միլիոն ռուբլի, որով պահվել են 172 լազարէթ, 12 սանիտարական գնացք, 5 գնացք բաղանիք և աւելի քան 200 սննդատու կայան։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՄՍ Ի. Ի. ՎՕՐՕՆՑՕՎ-ԴԱՇԿՈՎԸ ԲԱԳԻՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

20 սեպտեմբերի

ԲԱԳՈՒԻ.— Եկաւ կոմս Վորոնցով-Դաշկովը, որին կայարանում դիմաւորեցին բարձրաստիճան քաղաքացիական և զինուորական պաշտօնեաներ, դասային և հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչներ և պատգամաւորութիւններ։

Քաղաքագլուխը ճառ արտասանեց, որով շնորհակալութիւն յայտնեց կոմսին դէպի քաղաքային կարիքները ցոյց տուած բարեացակամ վերաբերմունքի համար։

Շնորհակալական ճառեր արտասանեցին նաև նաւթարդիւնաբերողների համագումարի խորհրդի նախագահը և բօրսային կոմիտէի նախագահը։

Արքայական տեսեակներում կոմսին ողջունեցին բոլոր ազգութիւնների հոգևորականութեան ներկայացուցիչները։

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

20 սեպտեմբերի

ՄՕՍԿՎԱ.—Մոսկվայի քաղաքապետը յայտարարում է.

Քաղաքում լուրեր են պտտվում, թէ սեպտ. 14-ին Սարատովայա հրապարակի վրա քաղաքապետ մի ոստիկան կալանաւորել և ծեծել է մի զինուորի, որ ունեցել է Գիորգիևսկի շքանշան և որը իբր թէ վիրաւորվել է։

Ճշմարտութիւնը վերականգնելու համար հարկաւոր եմ համարում յայտնել հետևեալը։

Սեպտ. 16-ին փողոցում կալանաւորվեց ինչ-որ արբած անձն զինուորի վերարկուով առանց ուսադիրների և գլխարկով առանց կոկարդի նրա համար, որ աղաղակում էր. «Զգուշացէք, գալիս է զրահածածկ աւտոմոբիլ։ ամբողջ ոստիկանութիւնը սրի կը քաշեմ»։ Թաղական ոստիկանատանը մի քանի ոստիկանական պաշտօնեաներ, քաղաքապետ ոստիկաններ և մասնաւոր մարդիկ ճանաչեցին, որ կալանաւորը մենակոյն զինուոր է, որի ձերբակալութիւնը սեպտ. 14-ին Սարատովայա հրապարակի վրա առաջ բերեց անկարգութիւններ։ Կալանաւորն իրան անուանեց գիւղացի Նիկոլայ Ալէքսէևիչ Կուզէլ, 22 տարեկան, և կանչվել է զինուորական ծառայութեան իբրև 2-րդ կարգի երկրապահ զինուոր։ Հարցաքննութեան ժամանակ նա ասաց, որ զօրքի մէջ ինքը չէ ծառայել և ոչ մի շքանշան չունի։ Սեպտ. 14-ին նա պէտք է մեկնէր Պետրովսկ՝ Սարատովի նահանգը, արբեց և ներկայանալու տեղը չը մեկնեց։ Իսկ թէ ինչ պատահեց յետոյ իր հետ Սարատովայա հրապարակի վրա, նա չէ յիշում։

Արբած Կուզէլը, ձերբակալվելիս, բռնեց քաղաքապետ ոստիկանի օձիքը և սկսեց աղաղակել։ Երբ նրան տանում էին ոստիկանատուն, նրա կերպարանքը և աղաղակը ժողովեցին ամբոխ, որը, ենթադրելով թէ ծեծում են զինուորին, ոյժով ազատեց նրան և մտադրվեց ոստիկանին լինչի դատատանին ենթարկել։ Ամբոխը, զրկված՝ ուստ տեղեկութիւններով, թէ ոստիկանութիւնը գանկոծում է զինուորներին, ատելանալով մերձաւոր փողոցներում և շարժվելով դէպի Տվէրսկայա փողոցը՝ քարեր էր նետում ոստիկանութեան վրա։ Ամբոխը կանգառ Պուշկինի արձանի մօտ, կանգնեցրեց էլեքտրաքարշը և պատնէշներ շինեց ճամբայի նստարաններից։ Որովհետև աւագ ոստիկանական պաշտօնեաներ ոչ մի յորդորանք աջողութիւն չունեցաւ և ամբոխը դիմելով մի շարք բռնի միջոցների ոստիկանութեան գործողութիւնների դէմ՝ ծանր վէրքեր հասցրեց 4 օֆիցէրի, 4 թաղական վերահսկիչի և 32 քաղաքապետ ոստիկանի, ուստի դժբաղդաբար կարգուկանոնը վերահաստատելու համար հարկ եղաւ գործածել զէնք, որի յաւելի հետևանքն այն եղաւ, որ սպանվեցին 3 և վիրաւորվեցին 12 մասնաւոր մարդ։

Գործի առիթով կատարվում է դատական քննութիւն։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

19—20 սեպտեմբերի

ՏՕԿԻՕ.—Ֆօրմօզայում դատարանը նորից մահվան է դատապարտել 172 ապստամբի։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— «Торгово-Промышл. Газета» լրագրի տուեալների համաձայն, հացահատիկի և հաճարի բերքը միջինից բարձր է։ Աշնանացանը քանակութեամբ միանգամայն բաւարար է, գարնանացանը մեծ մասամբ բաւարար է։ 60 նահանգներում ստացվել է միլիոնաւոր պուդ հացահատիկ։ Աշնանացան հաճարը՝ 1310, աշնանացան հացահատիկը՝ 387, գարնանացան հացահատիկը՝ 841, վարսակը՝ 832, գարին՝ 568։

ԲԱԽՄՈՒՏ.— Զարս չարամիտներ յարձակում գործեցին Էրաստովի քարածխային հանքերի գրասենեակի վրա և յափշտակեցին 3000 ր.։ Պահակների հետ ունեցած հրացանագութեան ժամանակ չարագործներից 2 հոգի բանվեցին։ Դրամը ետ խլվեց։

ՍՕՖԻԱ.— Դեսպան Սավինսկին 3-րդ օրն է տկար է։ Երէկ թագաւորի կողմից միսսիան այցելեց հօֆմարշալ Սավովը և տեղեկացաւ դեսպանի առողջութեան մասին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՀԱՇՏԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ

Սատանք 1) Զաքաթալայից, Աստ. Բէկ-Յովսէփեանի միջոցով, ստացված Առ. Զիգիլեանից՝ ի յիշատակ իր հանգուցեալ ամուսնի Մ. Զիգիլեանի 3 ր., 2) Բալախանիից, Տէր Յակոբեանի գործարանի ծառայողներից 25 ր., 3) Առաջին զօրաբաժնի շտաբից, Մելզաղան Ղուկասեանից, հաւաքված իր ընկերների շրջանում 10 ր.։

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Մեզ հաղորդում են Էջմիածնից, որ Եղբայր. Օգնութեան Գլխաւոր Կարգադրիչ Ցանձնաժողովի նախագահ Բագրատ եպիսկոպոս, իր զբաղմունքների շատութեան պատճառով, հրաժարական տուած լինելով նախագահութեան պաշտօնից և Վեհ. Կաթողիկոսի կողմից ընդունվելով այդ հրաժարականը, Ցանձնաժողովի նախագահ է նշանակվել ճեմարանի վերատեսուչ Գարեգին վարդապետը։

Զէյթուն (Կարաքիլիսէի շրջ.), 14 սեպտ.

Դարձով գնացել էի Զէյթուն։ Այն, ինչ որ աչքովս տեսայ, հնարաւոր չէ գրի անցնել։ Հրից ու սրից ազատված գաղթականներն այժմ մեռնում են ճանապարհներին կարէից սկսած մինչև Կարաքիլիսէ։ Իգդիրում գաղթականները խոշոր զոհեր տալով և միանգամայն յուսահատվելով սպասած եղբայրական օգնութիւնից՝ օգոստոսի սկիզբներից սկսել էին ներգաղթ, յոյս ունենալով ապրել տանը թողած փշրանքներով. բայց հիւծված մարդը կարող էր այդ երկար ճանապարհորդութիւնը կատարել։ Եւ նա չը կարողացաւ։ Այսօր հարիւրներով մեռնում են Ալաշկերտի և Բայազիդի հովիտներում քաղցից ու ծարաւից և բացօդեայ մնալուց։ Յայտնի է, որ ոչ մի հայկական քիւրդ գիւղ ընակութեան համար պատրաստական չէ, որովհետև երկու նահանջների ժամանակ այդ գիւղերը կործանված են, այնպէս որ ռուս զօրքն անգամ գիշերելու տեղ չունի։ Զօրքերը պատրաստում են իրանց համար գնդատիպ խրճիթներ։ Մեր համեստ կարծիքով՝ նոյն միջոցին պիտի դիմեն և գաղթականների մասին մտածող ընկերութիւնները, կոմիտէները և այլն. և դա կը լինի կարգինալ միջոց, մանաւանդ ռուս կառավարութիւնը այժմ իրաւունք է տալիս գաղթականներին բռնել քիւրդական ու թիւրքական գիւղերը Ալաշկերտի և Բայազիդի հովիտներում։ Այդ շրջաններում գտնվում են մօտաւորապէս մինչև 10,000 գաղթականներ, որ եթէ դրութիւնն այսպէս շարունակվի մինչև մի ամիս նրա կէսը կոչնչանայ, որովհետև զուրկ են ապրուստի բոլոր միջոցներից, մանաւանդ խրճիթներից։ Բացօդեայ գիշերելուց մրսում են, որի հետևանքը սոսկալի փորարինքն է, որ այժմ անխնայ աւերում է կմախքացած գաղթականների շարքերը։

Կզըլ-Դիզէում հաւաքվել էին մօտ 800 Վանայ շրջանի փախստականներ։ Նրանց թոյլ չէին տալիս անցնելու դէպի Վան, առարկելով որ զոհ կը դնան Թիւրքի եաթաղանին. բայց այդ դժբաղդները գերադասեցին մեռնել այդ եաթաղաններից, քան թէ հայ պատուոյ գործիչների խօսելացուից, և 15-ին լոյս 16 սեպտեմբերի ծածուկ փախուստի դիմեցին դրանցից մօտ 500 հոգի դէպի Վան, այն յուսով որ այնտեղ գուցէ գտնեն հրի ու սրի բերնից մնացած փշրանքներ... Երանի՜ թէ գտնէին։ Ես քիչ վերն յիշեցի, որ շատերը «եղբայր, պատ մը ջուր» աղերսելով են մեռնում։ Սա փաստ է, այն էլ այնպիսի աղաղակող փաստ, որ օգոստոսի 30-ին արարատեան քիւրդերի դէմ արշաւանքի գնացած զօրամասերը վերադառնալիս ականատես լինելով այդ սոսկալի փաստին՝ Իգդիր հասնելուն պէս 20—30 կօւժ առան, ուղարկեցին Իգդիրի կոմիտէին՝ բացատրելով էութիւնը։ Թէ կոմիտէը այդ ուղղութեամբ ոչինչ չէ արել, փաստը նա է, որ սեպտեմբերի 11-ից 14-ը դարձեալ ես տեսայ «պատ մը ջուր» աղերսող կանանց ու երեխանց, թափված ճանապարհներին, որոնք մաքառում էին մահվան դէմ։

Ընթերցող, մի զարմացիր, որ ծարաւից էլ կարելի է մահանալ։ Այո, այդ խարաբա ճանապարհներում ջուր չը կայ, մի ջրից կամ աղբիւրից մինչև միւսը տասնեակ վերստեր են, իսկ այդ վերստերը պիտի անցնեն բարձի ու ակոր կանայք ու երեխաներ։ Ժամը նրանք հաղիւ են անցնում մի վերստ, որի հետևանքն այն սոսկալի պատկերն է, որ ծառանում է իւրաքանչիւր ճամբորդի աչքին։

Երանելի ապրիլեան ներգաղթի ժամանակ Ալաշկերտի հովտում արել են վար ու ցանքս. այժմ հաւաքող ձեռք չը կայ։ Գաղթականներն այդ աշխատանքը կատարել չեն կարող։ Այո, չեն կարող. նրանք նման են կենդանի ուրուականների, որ ճիպոտացած ոտների վրա հազիւ են քայլում։ Ալաշկերտի և Բայազիդի հովիտներում հաւաքելու խոտ կայ. եթէ բանւորների խումբ կազմակերպվի, բաւականին օգտաւէտ գործ կատարված կը լինի յոգնատ այդ տառապեալների։ Որքան շուտ, այնքան լաւ, որովհետև վաղը գաղթականներին պիտի սկսեն մեղադրել և ծուլութեան մէջ, չիմանալով այն աղաղակող փաստը, որ նրանք այնքան են հիւծվել ու մաշվել, որ սիրելիների դիակներն անգամ չեն կարողանում թաղել։

Ուրեմն մնում է, որ գոնէ այժմ այդ բեկորների փրկութեան մասին հոգ տարվի, որ նրանք թիւրքի եաթաղանը եղբայրական օգնութիւնից չը գերադասեն։

Աբգար Պայազատ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ղազախ քաղաքի աղբիւրը

Ղազախ, 10 սեպտ.

Ղազախ քաղաքը իր կլիմայական անբարենպաստ պայմաններով իր գոյութիւնը պարտական է 7 վերստ հեռաւորութեամբ ստացվող աղբիւրի ջրին։ Այդ աղբիւրը քաղաքին նստել է տասնեակ հազարներ և ընդհատումներով շարունակում էր ջուր տալ քաղաքին երկար տարիներ։ Շնորհիւ այդ ջրի, տկար մարդկանց թիւը պակասել էր, չերմ ու տենդը նուազել։

Երկու տարի սրանից առաջ կարվեց աղբիւրը. հասարակութիւնն իրար գլխով անցաւ։ Ցաւալի, որ շուտ կը կանգնաւորին, սկսեցինք գետափին եղող «Ղարասուի» ջրերով կառավարվել։ Թէև վնասակար ջուր էր, բայց «անճարն էր կերել բանջարը», եօլա էինք գնում։ Անցաւ երեք ամառ և երեք ձմեռ. մեր աղաչանքը, խնդիրները, հեռագիրները, պատգամաւորները ոչինչ չարին. պատշաճաւոր իշխանութիւնը թոյլ չը տուաց քաղաքի 60—70 հազարից մի բան ծախսել ջրի ստացման համար, բայց նախահաշիւ կազմել էին 40,000 ռուբլու։ Այս գումարը, ջրի ամենակարևոր ժամանակը, իր սեփականութիւնից 300—400 ր. ծախսելով քաղաքի աղբիւրը կանգնաւորեց Իսմայիլ Աղա-Ղիասբէգովը և ազատեց մեզ ջրային պատժից։

Ղազախեցի

Լուրեր ընթացիկ կեանքից

Պետրոգրատ, 22 օգոստ.

Տեղիս էլեքտրաքարշի կոնդուկտորների կէս մասն արդէն կանայք են, որոնք զօրաւոր են տղամարդկանցից ոչ վատ։

Եղանակները սկսեցին ցրտել. եկեղեցիների թիւը կտրուկ-կտրուկ սկսում է պակասել։

Այսօր տեղի ունեցաւ տեղումս գտնվող բոլոր բժիշկների և բժշկ պրոֆեսորների ցուցակագրութիւնը։

Ահա մի քանի անգամ է, որ այստեղ տեղի է ունենում թռանաւարումն կրեմով պերսիդներից, բայց այդ երևոյթի վրա ուշադրութիւն դարձնող չը կայ։

Ս. Գրիգորեան

Մի համառ կռիւ

Զաքաթալա, 11 սեպտեմբերի

Մի քանի օր առաջ այստեղ հողին յանձնվեց 70-ամեայ հասակում տ. Մարիամ Զիգիլեանի մարմինը։

Հանգուցեալն իր կենդանութեան ժամանակ իր ունեցած-չունեցած առ ձեռն դրամը, այն է՝ 140 ր., կտակել է հետևեալ բարի նպատակներին. 1) 50 ր. իր հայրենի Ռամիս գիւղի (Սրևանի նահանգի Նախիջ. գաւ.) Ս. Յովհաննէս եկեղեցուն, 2) 50 ր. Զաքաթալայի հայոց Ս. Գէորգ եկեղեցուն, 3) 25 ր. Վեհ. Կաթողիկոսին՝ յօգուտ թշուառ հայ գաղթականների և 4) 15 ր. տեղիս ծխ. դպրոցին։

Բացի այդ՝ հանգուցեալի 100-ամեայ ամուսինը, Առաքել-ապէր Զիգիլեան, իր սեպհական միջոցներից իր տիկնոջ յիշատակին նուիրեց 5 ր. Տ. Նազարեանի հաշտարանին և 3 ր. Նպաստամատոյցին։ Սօյգաղէ

Յօգուտ հայ փախստականների

Մելիտոպոլ, 13 սեպտ.

Տաւրիկեան նահանգապետի թոյլտուութեամբ՝ օգոստ. 30-ին՝ մեզանում կատարվեց տուփիկներով միօրեայ դրամական հանգանակութիւն Էջմիածնում և նրա շրջականերում գտնված տառապեալ թիւրքահայ փախստականների օգտին։ Մաքը դուրս գալուց յետոյ, զուտ արդիւնք մնաց 650 ր. 79 կ.։ Բացի այս գումարից, կոմիտէի միջոցով հաւաքված 849 ր. 21 կ. ևս միացվեց յիշեալ գումարին և ամսոյ 8-ին ուղարկվեց Էջմիածին, յանձն. Վեհ. Հայրապետի 1500 ր., խնդրելով այդ բոլորը յատկացնել վերոյիշեալ նպատակին։

Տեղիս կոմիտէն զանազան ժամանակներում յաջորդաբար ուղարկել է Թիֆլիս 3000 ր., բացի հագուստները և զանազան իրերը։ Կամաւոր տուրքի հանգանակութիւնը շարունակվելու է։

Ս. Մամիկոնեան

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Սեպտ. 17-ին Բաթումում, Միքայէլեան բերդի դատարանում, սկսվեց մի խումբ (9 մարդ) աշարացիների գործի քննութիւնը, որոնք մեղադրվում են պետական դաւաճանութեան մէջ։ Առաջին օրը կարդացվեց մեղադրական ակտը։ Այն հարցին, թէ մեղաւոր են ճանաչում արդեօք իրանց մեղադրեալները, ամենքը պատասխանեցին բացասաբար։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Վաղը առաւօտեան 10 ժ. 58 րոպ. Թիֆլիս է ժամանում Կովկասի նոր Փոխարքայ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչ։ Մեծ Իշխանը նախ գնալու է Սիոնի տաճարը, որի համար էկզարխ Պիտիրիմ արքեպիսկոպոսը ընդունելութեան առանձին կարգ է մշակել։ Քաղ. ինքնավարութիւնը Մեծ Իշխանին ընդունելու է աղ ու հացով։ Փոխարքային ընդունելու կենտրոնական տեղը հանդիսանում է Թիֆլիս կայարանը։ Քաղաքը ամբողջապէս զարդարված կը լինի դրօշակներով, իսկ գլխաւոր փողոցները ծաղկեփնջերով։ Երեկոյեան կը լինի լուսաւորութիւն։ Փոխարքայի գալու ժամին տեղիս բոլոր դպրոցների աշակերտութիւնը լինելու է Գօլովինսկի փողոցի վրա։ Այդտեղից մինչև կայարան կանգնած կը լինի և զօրքը։ Փոխարքան բացի Սիոնի տաճարը այցելելուց, կայցելի նաև հայոց Վանքի եկեղեցին, Թուրքաց և պարսից մէչէդները, որից յետոյ կը մնի պալատ։

◆ Կովկասեան նոր Փոխարքայ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչի հետ Թիֆլիս են գալիս նրա ամուսին Մեծ Իշխանուհի Անաստասիա Նիկոլայեվնա, եղբայրը՝ Մեծ Իշխան Պեսար Նիկոլայեվիչ և նրա կինը՝ Մարիամ Նիկոլայեվնա։

◆ Սեպտ. 17-ին, հինգշաբթի, կոմսուհի Ե. Ա. Վորոնցով-Դաշկովայի նախագահութեամբ կայացաւ պատերազմից վնասածներին օգնող Կովկասեան Գլխաւոր Կոմիտէի հերթական նիստը։ Կոմիտէի նախագահուհուն մեկնելու առթիվ ներկայացվեց ուղերձ։ Այնուհետև կոմս Ի. Ի. և կոմսուհի Ե. Ա. Վորոնցով-Դաշկովներն ընդունվեցին Կոմիտէի պատուաւոր անդամներ։

◆ Մօտ օրերս Թիֆլիս են գալիս Կիէվի համալսարանի պրոֆեսորներ Ս. Գ. Նաւաշին և Ա. Վ. Ֆօմին, գիտական հետազօտութիւններ կատարելու տեղիս Բուսաբանական այգում։

◆ Կովկասեան պատգամաւորներ Զաֆարով, Պապաջանեան, Սկորելով իմացել են, որ պոլիտեխնիկումները Կովկաս չեն փոխադրվի։ Վարշավայի պոլիտեխնիկումը արդէն փոխադրվում է Նիժնի-Նովգորոդ, ժամանակաւորապէս զբաղմունքները սկսելով Մոսկվայում։ Իշխ. Շախովսկին յայտնել է, որ Կովկասը չը պէտք է յուսայ, որ փոխադրելի պոլիտեխնիկումներից օրինակ մէկը կը տեղափոխվի Կովկաս։

◆ Խոլերային հիւանդանոցի տուած վերջին տեղեկութիւններից երևում է, որ այս քանի օրվայ ընթացքում խոլերայով հիւանդացողների թիւը սկսել է նուազել։ Հիւանդանոցում եղած հիւանդները բժշկվում են հետզհետէ։

◆ Թիֆլիսում ամսոյ 20-ից սկսել է հրատարակվել Ա. Մահտեսի-Յակոբեանի հրատարակութեամբ և խմբագրութեամբ մի նոր հայերէն թերթ՝ գրական-հասարակական, քաղաքական և տնտեսական, «Հայրենիք» վերնագրով։ Թերթը իր առաջնորդող յօդուածի մէջ ասում է, որ նրա նպատակն է ծառայել հայ դէմօսին, որ նրա համար չը կայ խաբ ոչ հրէի և ոչ հեթանոսի և նա հեռու է լինելու նեղ թիֆլիսականութիւնից, խնամէութիւնից։ Սպասենք և տեսնենք ինչ չափով իրագործելու է նոր թերթն իր ծրագիրը, իսկ այժմ մաղթենք նրան աջողութիւն։

ԿՈՎԿԱՍ

◆ Այս օրերս Բաքւում կայացել է հրատարակիչների խորհրդակցութիւն՝ բանւորական աշխատանքի թանգութեան և մեծ վնասների պատճառով թերթերի հատավաճառը 5 կոպէկից դարձնելու 6 կոպէկ։ Այս որոշումը Բաքւում գործադրվելու է սեպտ. 22-ից, իսկ օտար քաղաքներում հոկտեմբերի 1-ից։

◆ Բաքուի քաղաքագլուխ Լ. Լ. Բրէչը հեռախօսով դիմել է քաղաքագլուխ Ա. Խատիսեանին, առաջարկելով զումարելով շրջանային համագումար արտադպրոցական

կրթութեան մասին։ Բոլի կարծիքով, համագումարը անհրաժեշտ է քննելու այն հարցը, թէ ինչպէս օգտագործել ժողովրդի ազատ մնացած ժամանակը, որը առաջացել է ռազմից խմիչքների գործածութեան արգելման պատճառով։

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ «Բ. Բ.»-ին հեռագրում են Պետրոգրադից, որ մինիստրների խորհրդի նիստում՝ Արքայական Կայսրում Պետ. Դումայի զբաղմունքները մօտիկ ապագայում վերսկսելը ընդունում է վաղաժամ։ Յետաձգվել է զեմստվային և քաղաքային պատգամաւորութիւնների ընդունելութիւնը։

◆ Պետական Խորհրդի առաջին հրէայ անդամ Վայնշտէյնը յայտնել է, որ նա անհրաժեշտ է համարում բոլոր քաղաքական խմբակների և սոցիալական դասակարգերի, ինչպէս նաև բոլոր ազգութիւնների սերտ միութիւնը յաղթութիւն տանելու համար։

◆ «Բ. Բ.»-ին հաղորդում են Ստոկհոլմից, որ իբր տպաւորութիւն գործեց Պետական Դումայի արձակելը։ Պետրոգրադի Հեռագրական Գործակալութիւնը շվէդական լրագիրներին մի հեռագիր ուղարկեց, թէ Դումայի ընթացաւ ժողովրդի տրամադրութեան հակառակ՝ հրաժարվելով հետևել՝ «ամեն ինչ յաղթութեան համար» ընդհանուր լոզունգին։ «Բ. Բ.»-ն այդ առիթով նկատում է. «Հետաքրքիր է իմանալ, թէ ինչով է ղեկավարվել Գործակալութիւնը, աղաւաղելով ճշմարտութիւնը մինչև այդ աստիճան»։

◆ «Ե. Բ.»-ն նկատում է, որ կօմպետենտ մարդիկ օրշում են այսպէս. Պետ. Դումայի աշխատանքները հաւանօրէն չեն վերսկսվելու նոյեմբերից վաղ. կաբինետում մօտ օրերս փոփոխութիւններ չեն նախատեսվում։

◆ «Ս. Բ.»-ի ասելով, աշակողմեանները լուր են տարածում, թէ Պետ. Դուման գումարելը յետաձգված է մինչև Նոր-Տարին։

◆ «Բ. Սլ.»-ին հեռագրում են Պետրոգրադից, որ Պետ. Դուման մատդրութիւն կայ գումարել նոյեմբերի 1-ին։

◆ Արքայական կայանում որոշվեց, ինչպէս յայտնի է, չընդունել համաձայնության և համաքաղաքային միութիւնների պատգամաւորութեան։ Սակայն որոշվել է շնորհակալութիւն յայտնել զէմստվոների և քաղաքների ցոյց տուած օգտակար ծառայութեան համար պետական ինքնապաշտպանութեան գործում։

◆ Պետրոգրադում կայացել է մինիստրների խորհրդակցութիւն Կրիվոշէինի ընակարանում։

◆ Պետրոգրադում հոկտեմբերի սկզբին խորհրդակցութեան են գումարվելու միացեալ ազնուականութեան ղեկավարները։

◆ «Բեչ»-ը հաղորդում է, որ երկրագործութեան գլխաւոր կառավարիչ Կրիվոշէինը յայտնել է, թէ Պետական Դուման մատդրութիւն կայ գումարել հոկտ. 25-ին։

◆ Հոկտեմբերի սկզբին պարզ կը լինի զինուորական նախկին մինիստր Սուխոմլինովի գործունէութիւնը քննող գերագոյն մասնաժողովի աշխատանքների արդիւնքը։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Դրամա

Շաբաթ, սեպտ. 19-ին, Արարատեան Ընկ. Թատրոնում տեղի ունեցաւ Ամերիային սեզոնի բացումը։ Այս տարի այդ գործը վարում է «Տարտօ» ռուս դրամատիկական ընկերակցութիւնը, որի կարգադրիչն է Ա. Ա. Տուգանովը։ Առաջին ներկայացման համար ընտրված էր Իւժինի հանրածանօթ «Старый закалъ» դրաման, որ խաղացվից մեծ ոգևորութեամբ։ Կանացի օյժերից իրանց գեղեցիկ խաղով աչքի էին ընկնում Նելիդինսկայան, Մրավինան և Կօշևան. առանձնապէս Մրավինան շնորհակալիօրէն տարաւ Լիզամիլայի դերը։ Նելիդինսկայան տուեց Վերայի հոգեկան բարդ ապրումները։ Գնդապետի դերում լաւ էր Լիւբիմով-Լանսկին։ Մէաս դերակատարները իրանց խաղով նպաստեցին ներկայացման ամբողջական տպաւորութեան ստեղծմանը։

Դահլիճի բոլոր աթոռները բռնված էին։ Դերակատարներին վարձատրում էին ծաղիկներով և ծաղկեպսակներով։ Գ. Տ.-Ռ.

ՄԱՄՈՒԼ

Ակնբախ իրողութիւն է հանդիսանում այն հանգամանքը, որ հայ ժողովրդի գլխին թրատացած սոսկալի մրրիկ-ադէտի հանդէպ վրացիները սաստն անտարբերութիւն պահպանեցին, և, ինչպէս վայել է եղբայրակից և հարևան ժողովրդին, կարեկցութեան օրհէ ապացոյց կամ արտայայտութիւն չեղաւ նրանց կողմից։ Պէտք է սակայն, որ կարեկցութեան այդ բացակայութիւնը չէ վերացել վրացիական որոշ հասանքի կողմից և «Թանամեղրովէ Ազբի» թերթը նոյնիսկ այդ առիթով մի ամբողջ պարտական յօդուած է տպել։ Վրացի թերթը գտնում է, որ այդ անտարբերութիւնը միայն վրացի նացիոնալիստների մէջ գոյութիւն ունի, ուստի և պախարակում է նրանց։

Նկարագրելով մի քանի վառ գոյներով հայ-փախստականների ադէտները, վրացի թերթը գրում է.

Ի՞նչ արին մեր մարդասէր ազգայնականները, ինչով մխիթարեցին բնաջնջման ճանապարհին կանգնած հարևաններին։ Քանի՞ հայերի փրկեցին մահից։ Ո՞րքան դեղորայք, ո՞րքան բժիշկներ ղրկեցին, և քանի՞ արդեօք անտուն մարդկանց ապաստան տուին։ Սակայն ինչ հարցնել, պատասխանը մէկ է՝ ոչինչ, բացարձակապէս ոչինչ չի արված։ Սրան կարող են առարկել, թէ մենք ինքներս գտնվում ենք սարսափելի դրութեան մէջ։ Աջարիան աւերվեց, հեղեղները վնասներ հասցրին, պատերազմը իր հետևանքներով անդրադառնում է և մեզ վրա և այլն։ Բայց, նախ, այդ ամենը մի կաթիլ է հայկական աղէտի համեմատութեամբ, իսկ երկրորդ՝ նման առարկութիւնը կարող է անել վրաց ժողովուրդը, բայց ոչ մեր ազգայնականները, որոնք ամաչում են խօսել մեր սովի մասին և անգամ աջարացիներին ցոյց տուին աննշան օգնութիւն։

Ցաւօք մեր ազգայնականների պիտի ասենք, որ նրանք չեն սահմանափակվում միայն ինդիֆերենտ վերաբերմունք ցոյց տալով դէպի հայերի աղէտը։ Իսկապէս գործով նրանք շատ անտարբեր են դէպի հայերը։ Ահա օրինակ նրանց գործունէութիւնից։

Երևակայեցէք ձեզ, «Սաքարթվէլօ» լրագիրը գրամանում է, որ պատգամաւոր Պապաջանեանը և կովկասեան իշխանութիւններն անհրաժեշտ են համարում կառավարչական օգնութիւն հասցնել անբարդ փախստականներին, և որ դեռ մօտ ժամանակներս պատգամաւոր Պապաջանեանը խնդրեց այդ նպատակի համար կէս միլիոն բուբլի, օրը և ներքին գործերի մինիստրութիւնը փոխադրեց, որ տեղական իշխանութիւնը նոյնպէս փախստականների վրա մեծ գումարներ է ծախսում և յետոյ ասում է, որ 1828 թ. կառավարութիւնը դրամական մեծ օգնութիւն ցոյց տուեց Թիւրքիայից փախած հայերին և բնակեցրեց նրանց Ջաւախքում (Ախալք. գ.) և Ալէքսանդրոպոլի շրջանում։

Սակայն մեր ազգայնականները սա առաջին անգամը չեն անում։ Դեռ անցած տարվայ դեկտեմբերին «Կոչ» լրագիրը, «Սաքարթվելոյի» նախորդը, արշաւանք սկսեց հայերի դէմ, որոնք իբր թէ փախստականներին օգնելու համար անհանգստացնում են զանձարանը։ Դեռ մօտ ժամանակներս ողջ ազգայնական մամուլը աղմուկ բարձրացրեց այն առիթով, որ Արևմտեան Վրաստանից երկու վրացի բժիշկ ուղարկվեցին հայ-փախստականների շրջանում երևացած համաճարակի դէմ կռուելու։

Վերջում լրագիրը ասում է.

Հայերը կը հասկանան, որ այս ամենը լինում է մի խմբակի կողմից, որն ընդհանուր օչինչ չունի վրաց ժողովրդի հետ։ Վրաց դեմոկրատիան հէնց սկզբից ցուցով հետևում է իր հարևանների ողբերգական վիճակին։ Մեր ժողովուրդը նոյնպէս գտնվում է դժբաղդ դրութեան մէջ և անկարող է նիւթական օգնութիւն ցոյց տալ հայերին, բայց օրը օր առիթ է հանդիսանում, մենք ապացուցում ենք մեր համերաշխութիւնը նրանց։ Թիշենք մեր պատգամաւորների գործունէութիւնը կարսում, վրաց դեմոկրատական տարրերի դերը փախստականներին օգնող Բագուի ինտերնացիոնալ կոմիտէի մէջ...

Ուրախալի է արձանագրել, որ վրաց մամուլի օրգանը այսպիսի առողջ և մարդասէր մտքեր է արտայայտում։

*

Մեր մէջ սովորական երևոյթ է դարձել, որ ամեն անգամ, երբ մի նոր թերթ է հրատարակվում, նա յաւակնորէն կարծում է, որ ամեն բան իրանով է սկսվում և իրանով վերջանում, որ իրանից առաջ ամայութիւն էր։ Այդպիսի յաւակնոտ կարծիք ունի, ինչպէս երևում է, իր մասին և նոր հրատարակվող «Վան» թերթիկը, որ Լեոն ստորագրութեամբ յայտարարում է, թէ իբր կովկասահայ մամուլը և մասնաւորապէս թիւնը բնաւ ծանօթ չէ թիւրքահայ գրական գործիչների հետ, ուստի և ինքն «Վանը» ստիպված է ծանօթացնել մեզ այդ դէմքերի հետ։

Անկէտ «Վանին» խորհուրդ կը տանք աչքից անցնել «Մշակի» անցեալ տարիների համարները և նա այնտեղ կը տեսնէ սուտ նիւթեր և Զոհրապի, և Դ. Վարուժանի, և Ռ. Զարդարեանի, և Կամսարականի, և Արփիարի, և ա. Տիւսապի և այլոց մասին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 17 սեպտ.

Վանի առաջին նահանգի ժամանակ Բերկրիի կամուրջի վրա՝ քիւրդական յարձակման միջոցին՝ կորցրի մուշ-կապտագոյն մի պիջակ, կարված՝ Շատախի արայից։ Պիջակի գրպանում կային իմ կեանքի ապահովագրութեան վերաբերեալ մի քանի փաստաթղթեր, տրված «La New-York» ընկերութիւնից։ Խնդրում եմ այն անձին, ով գտել է այդ պիջակը, բարի լինէր ուղարկել յիշեալ փաստաթղթերը «Մշակի» խմբագրութեանը՝ յանձնելու ինձ։

Թովմաս Իսահակեան (շտապեպ)

—

Թիֆլիս, 21 սեպտ.

Նպաստամատոյց Ընկերութեան Վարչութիւնը իր պարտականութիւնն է համարում անկեղծ շնորհակալութիւն յայտնել բժ. Իսահակ Տէրտէրեանին, որ սիրայօժար արձագանք տուեց Ընկերութեան յայտարարութեան և պատրաստակամութիւն յայտնեց ձրիաբար բժշկական օգնութիւն հասցնել ընկերութեան բացած օրգանոցի սաներին։

Բժշկի ամսական ռոճիկի համար յատկացված 25 բուբլին, համաձայն յարգելի բժշկի ցանկութեան, գործադրվելու է դեղորայքի վրա։ Վարչութիւն

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

Թիֆլիս, Կարապետ Կարախանեանին.— Ձեր անուան նամակ է ստացվել։ Մտէք խմբագրատուն և ստացէք։

Թիֆլիս, Նշան Յակոբեանին.—Նոյնը։

Թիֆլիս, Օգսէն Դեղձունեանին.—Նոյնը։

ՋԱԼԱԼԱԲԵԴ, Ա. Խաչատրեանցին.—Ձեր ուղարկած 34 բուբլին յօգուտ հայ փախստականների ստացված է օգոստ. 18-ին և յիշատակված է «Մշակի» այս տարվայ № 193-ի մէջ։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ.) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Զուլֆա 8 ժ. 53 ր. երեկ.
» Բորժոմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից— 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ.) 7 ժ. 41 ր. երեկ
№ 10 Բաթումից— 9 ժ. 51 ր. առաւ.
Զուլֆայից — 8 ժ. 11 ր. առաւ.
Բորժոմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Նուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ՝ Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներսրկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ՍԹԱՏՈՑՆԵՐԸ

Բ. Ս. ՆԱՒՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Դ. ՍԱՂՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ղեկայնև երեխայոց հիւանդութ. և ծոխկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՈՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Պ. ՅՈՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեսշ. հինդշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծոցկահատ.։
ԿԻՆ.Բ.ԺԻՇ ՅԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբար ձուքիւն և կանանց հիւ.։

ԵՐԵՆԿՈՆՆԵՐԸ

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՈՎԻՉ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—152

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՐԴ!

Դու փառք ես որոնում, բայց չես հասնում նրան.

Մէկը՝ առանց կօղէկի մեծ գործ է սկսում և առաջ գնում. միւսը նայանձում է նրան, իր ծնողքան օրն ու ժամը անիծում, ճակատագրից գանգատվում։ Այն ինչ՝ բաղդը, ճակատագիրը դեր չունեն այդտեղ։

Զատերը կան, որ դեռ չեն ըմբռնում իրանց անապահովութիւնների իսկական պատճառները, չը գիտեն, որ դրանք թաղնված են քայքայված օրգանիզմի և ջղային հիւանդութիւնների մէջ։ Ջղային հիւանդութիւնը գլխաւորապէս առաջ է գալիս ոլորի ուլեղի և ողնաշարժի անկանոնութիւնից և հիւսի ու փոսֆորի շատ կորցնելուց։

Ջղային հիւանդութիւնները գանգատ տեսակի են. օր. գլխացաւ, ցնցումներ, մէջքի, ողնաշարի, երեսի, կոկորդի, ոտքի, ձեռքի ոսկորների ցաւ, անքնութիւն, ծանր երազներ, երբեմն աչքերի խաւարում, գող, անհանգստութիւն, օրգանական թուլութիւն, մոռացկոտութիւն, փախ, արբեցողութիւն, բարկացկոտութիւն, նիհարութիւն և այլն։

Դրանց բուժելու երկու ճանապարհ կայ. 1) Անպայման հանգստութիւն, մասաժ և ֆիզիկական աշխատանքներից առ ժամանակ խուսափել,—մի բան, որ դժուար է ներկայ ջղային դարում, երբ ամեն վայրկեան ցնցող դէպքերն են յաջորդում միմեանց։

Մնում է երկրորդ միջոցը՝ ամենադարաւ հիմերը ընդունելը։ Իսկ այժմ ամենալաւ հիմերը ՓՈՍՓՈՐՆ է։

Պարիզի յայտնի բժիշկ Գլէզին երկար աշխատանքից և փորձերից յետոյ աջողվել է պատրաստել միակ դեղը, որը պարունակում է իր մէջ մեծ քանակութեամբ ֆոսֆոր. այդ դեղը կոչվում է Ստիմուլոլ, որը վերականգնում է կորցրած երիտասարդութիւնը, առողջութիւնը և ընդհանուր ջղայնութիւնը և թուլութիւնը. արտասահմանի և Ռուսաստանի յայտնի պրոֆեսորները, բժիշկները և հիւանդները տուել են իրանց գովասանքը և շնորհակալութիւնը և այժմ զանազան սանատորիաներում և հիւանդանոցներում բժշկում են հիւանդներին Պարիզի յայտնի բժիշկ Գլէզի հանձարեղ դեղով՝ Ստիմուլոլով... Ահա ինչ են գրում Ստիմուլոլի բժշկութեան մասին բժիշկները.

Ցարդելի բժիշկ! Ուրախութեամբ յայտնում եմ, որ Ստիմուլոլ պրեպարատը ապիս է գործածելի արդիւնք։ Ստիմուլոլ պրեպարատը հանձարեղ գիւտ է, նա ընդունելու համար շատ դեղեցիկ կերպով բաժանված է և ամբողջ սրտով աջողութիւն եմ ցանկանում նրան։

Իմ հիւանդների սեռական ջղայնութեան ամենածանր դէպքերը ես բժշկում եմ ստիմուլոլով։ Հիւանդութեան թեթև դէպքերում ստիմուլոլի ազդեցութիւնը նկատվում է 2—3 շաբաթից յետոյ, իսկ ջղային հիւանդութիւնների դժուար դէպքերում՝ 3—4 շաբաթից յետոյ։

Աչքի առաջ ունենալով պրեպարատի կատարելագործումները մի քանի դէպքերում, ես այն յանձնարարել եմ հիւանդին նոյնիսկ ոչ նրա ներկայութեամբ, ցոյց տալով նրան դեղատոմսից օգտվելու հեշտ ձևը։

Սեռական անկարողութեամբ բռնված հիւանդները Ստիմուլոլով աջողութեամբ կարող են օգտվել առանց բժշկի դեղատոմսի, որ առանձնապէս ձեռնտու է, աչքի առաջ ունենալով այն կեղծ ամօթխածութիւնը, որ դրում են հիւանդները։

Սեղմում եմ ձեր ձեռքը՝ Պրոֆ. Մ. Լեպատա։

Իսկական Ստիմուլոլը պատրաստվում է Ֆրանսիայում (Պարիզում), ամեն մի արկղը ունի գործածելի դրոշմը՝ Institut „D-r Calvet Paris“. Մի տուփը բաւական է, որ դուք զգամ նրա հրաշալի գործողութիւնը և դուք կը սեանսք ձեր ուզած եռանդը և առողջութիւնը. դեղերի հետ ուղարկվում է բոլոր եւրոպական և Ռուսաստանի պրոֆեսորների, բժիշկների, հիւանդների գովասանքները և շնորհակալական նամակները։

Պատուէրները, փողը և նամակները ուղարկել 1) Тифлисское отдѣленіе Института доктора Кальве, Тифлисъ, Эриванск. площ., Пушкинская 3, верхній этажъ, отд. II. (Խնդրում հասցէն գրել լրիւ, ինչպէս որ ռուսերէն գրված է)։ Մէկ տուփը արժէ 7 բուբ., ճանապարհածախսով և վերադիր վճարով 50 կոպ. աւելի արժէ։ Ով ուղարկի 7 ր. փողը առաջուց լիովին, ճանապարհածախս չի վճարում։

Վերադիր վճարով ուղարկվում է միայն 2 ր. 50 կ. կանխավճար ոտանալուց յետոյ։

Գլխաւոր պահեստը ամբողջ Անդրկովկասի համար— Интернаціональное медико-фармацевтическое депо, Тифлисъ, Эриванск. пл., № 3.

(Ե.) 609. 10—2

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ,

որ երկար ծառայել է զանազան հիմնարկութիւններում, օրհնում է նամակատարի կամ գրասենեկային ծառայի (сторожъ) *պաշտօն։ Հասցէն՝ Նախալովկա, Օբէրօվսկայա փող. 15, տ. Միրզոյեվի, հարցնել Պետրոս Դաբաղեանցին։*

670. 2—1

ԱՆԴԻԺԱՆԻ *Հայոց եկ. ծխ. դպրոցի համար հարկաւոր է ճեմարանաւարտ կամ թեմական տարեցիկ խումբ պատրաստող և ազատ ամեն տեսակ դիւրական ծառայութիւնից*

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ,

Ռոճիկ ճանապարհածախսով 650 բուբլի։ 24 դաս։ Շատապով դիմել հետևեալ հասցէով՝ Андижанъ, Кітитору Нерсесу Аветову, для попечительства.

666. 2—1

НОВОЕ ИЗОБРѢТЕНІЕ ВЪ АМЕРИКѢ.

Въ столицѣ новаго міра Нью-Іоркѣ М. Деламуремъ изобретено самое рациональное средство „Рапидъ“ для полнаго излеченія остраго и хроническаго Триппера (Гонорреи).

Въ настоящее время въ лучшихъ клиникахъ и санаторіяхъ цивилизованныхъ странъ Америки и Европы для излеченія Триппера (Гонорреи) какъ остраго такъ и самаго застарелаго хроническаго, извѣстные врачи, профессора и спеціалисты примѣняютъ составъ „Рапидъ“ изобретенный М. Деламуремъ. „Рапидъ“-разрѣшенъ Россійскимъ Главнымъ Медицинскимъ Управленіемъ за № 1295.

Курсъ леченія при самыхъ застарелыхъ случаяхъ три недѣли, два двойныхъ флакона и коробка пилюль, прилагается способъ употребленія на всѣхъ мѣстныхъ языкахъ. Каждый больной можетъ у себя дома лечиться безъ посторонней помощи, въ тайнѣ. Цѣна за одинъ флаконъ 5 руб. полный курсъ леченія 2 двойныхъ флакона и коробка пилюль 9 руб. въ провинцію меньше двухъ флаконовъ не высылается. Налож. плат. высылается только по полученіи задатка 3 руб.

Избѣгайте недоброкачественныхъ и вредныхъ для здоровья поддѣлокъ и подраженій.

Исключительный складъ для всего Кавказа, въ Кавказскомъ отдѣленіи Московской Лабораторіи М. Деламуре, Тифлисъ, Эриванская площадь Пушкинская 3. д. Кредитнаго О-ва верхній этажъ.

Всѣмъ лазаретамъ, госпиталямъ аптекамъ и аптекарскимъ складамъ отпускается со скидкой, не менѣе 5 коробокъ.

(Ե.) 50—2

Եղեսիայի *եկ.-ծխ. տղայոց քառամեայ և օր. եռամեայ դպրոցների համար հարկաւոր է*

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

միջնակարգ կրթութեամբ. շաբաթական կանոնաւոր 25 դաս և հերթ. վերակացութեան պաշտօն տղայոց դպրոցում 3 օր։ Տարեկան ռոճիկ 450 ր., սենեակ, ծառայ և վառելափայտ։ Ստանձնող ուսուցչին ռոճիկը կը տրվի պաշտօնավարելուց սկսած. իսկ սեպտեմբերի 1-ից մինչև այն օրը յիշեալ տարեվերջից դուրս կը բերվի չը պարապած դասերի համար հասանելիք գումարը։

Ցանկացողները թող անյապաղ դիմեն հետևեալ հասցէով՝ Черезъ гор. Моздокъ, въ м. Эдиссію, Эдиссійскому Армянскому церковно-приход. Попечительству.

659. 3—3

Առեւտրի եւ Արդիւնաբեր. Մինիստրութեան հսկողութեան ներքոյ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ

ԵՐԿՍԵՌԻ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ

(Թիֆլիս, Միխայլովսկի պր., № 24, տել. № 9—76.)

Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից։ Մրագիրներն ու կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատնից։

(Կ. Հ. Հ.) 480. 0—27

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԲՐՕՆԻՆԳՆԵՐՈՎ, ԵՒ ՀԱՇԻՒՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՅՈՎՀ. ԶԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ

Ընդունելութեան քննութիւնները օգոստոսի 24-ից։ Պարապմունքների սկիզբը՝ ուսումնարանում—սեպտեմբերի 1-ից, կուրսերում—սեպտ. 15-ից՝ I Тумановская ул. с. д. № 31

640. 10—7

Առեւտրի եւ Արդիւնաբեր. Մինիստրութեան իրաւասութեան ներքոյ գտնվող

Հաշուապահական Կուրսեր Գ. Կ. ՏԷՐ-ԳԱՒԹԵԱՆՑԻ

Թիֆլիս, Նիկոլայէվսկայա փող., № 36,

Նոյն տեղը **ՊԱՆՍԻՕՆ Մ. ՏԷՐ-ԳԱՒԹԵԱՆՑԻ**

Ընդունվում են աշակերտներ լրիւ պանսիօնով, դասերի պարապմութեամբ և առանց Խնդիրների ընդունելութիւնը երեկոյեան ժամը 3—7-ը։

(Ե. Հ. Շ. Կ.) 541. 50—22

Լոյս են տեսել և վաճառվում են

ՍԱԼ-ՄԱՆԻ

ՀԱՅԱԶԳԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ

Պատկերազարդ հետևեալ գրքերը.

1-ին. Գեներալ-ադիւտանտ ԿՈՄՍ Մ. ԼՕՌԻՍ-ՄԵԼԻՔՈՎԱՆ 40 կ.
2-րդ. Դաղստանի և Կարսի հերոս գեներալ-ադիւտանտ Յ. ԼԱԶԱՐԵԱՆ 30 կ.
3-րդ. Բայազէտի հերոս գեներալ-լէյտենանտ ԱՐՇ. ՏԷՐ-ՂՈՒԿԱՍԵԱՆ 35 կ.

Երեք գրքերը միասին՝ ճանապարհածախսով և վերադիր վճարով արժէ 1 ր. 35 կ.։ Դիմել հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Бебутовская ул. № 6. Екатеринѣ Айруни.

(Ե.Հ.) 699. 10—5

Типографія Канцеляріи Наместника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.

ՀԻՒԾՎԱԾՈՒԹԻՒՆ

ու նիհարութիւնը, եթէ առաջացած է թոքախտից, սիֆիլիսից եւ կամ այլ քրոնիկական հիւանդութիւններից, նէվրասթենիան եւ ջղային հիւանդութիւնները, սեռական թուլութիւնը, սրտի հիւանդացումները, զառամութիւնը մեծ աջողութեամբ բժշկում է Սպերմին-Պէլը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ։

Սպերմին-Պէլը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպերմինն է. այդ պատճառով էլ պէտք է ուշադրութիւն դարձնել

„ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ“ *անուան վրա և չը գնել կեղծվածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մահլամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպերմին-Պէլի հետ ոչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր։*

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանիզմը բարելաւիայով հետաքրքրվողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կօղէկանոց նամակագրում ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը։

Սպերմին-Պէլին կայ ամենուրեք։

Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-вья Петроградъ

Մատակարար Նորին Կայսերական Մեծ. Դրան

№ 4 0—7